

ԿՈՎԻԱՄ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԴՈՐԾ. ՀԱԿԵՐԱԼԻՔԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ.

ԾԱ 16.15

# ՆՈՐ ԱՅՋԲԵՆԱՐԱՆ

(ՕՐԴԻՇԱՆԿԵՆ ՄԵԹ-ՈԴՈՎ)

Ուսումնիք քայլք—  
մանաւելք զուտոր.

Հեղինակութիւն

ՍԵՐԴԱՐ ՄԱԿՐԻՆԵԱՆԻ


Եխակատաք սպասելու Եւ բացառվութիւն

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՍԱՐ

ԹՐԱՎԵԼԻ

ԿԵՊՈՒՐԱՆ Ընկ. | ՏԻՊՈՐ. Դ-ՎԱ «ԿՈՒՂՈՐ»  
ՀԵՂԻՆԱԿԱՏԱԳՐ ՀԱՅ Խ. 16.

1909



Հարմ.  
2-45782

ԳՈՎԿԱՄԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐՈՒԴԻ

04 MAY 2010  
04.05.2010

491.99(077) 2-45782 944

S-25

# ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

(ՕՐԴԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ)

Ուսումն լուրջ—  
մանուկը զուարք.

Աշտղելուական մասը ստանձին է հրատարակած.

Հեղինակութիւն

ՍԵՐԱՀ ՄԱՆԴԻՆԵԼԻ

Լիակատար սկատկեր եւ բացատրութիւն

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմ. № 20730

Թ-131.0

Տպարան «Կուլտուրա» Բնկ. | Типогр. Т-ва «Культура»  
Եզրակացնական պատճենական գույք և առաջարկագիր պատճենական գույք

1909

24.06.2015

ՎԵՀԱՓՈՐ

Տեր Տեր ՄԱՏԹԵՈՍ Երկրորդին

Ամենայն Հայոց ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԱՆՍԱՀՄԱՆ ՅԱՐԳԱՆՔՈՎ

ՅՈՒՍՈՎ և ՀԱԽԱՏՈՎ

ՆՈՒԹՐՈՒՄ է

ԱՇԽԱՏԱՄՈՎԸ



39871-63

## ՅԵՒԱԶՅԱՅԻՆ

Օրդանական մեթոդի տեսութիւնը նոր չէ մեր գրականութեան մէջ։ նա մի քանի անգամ ծանուցվել է ընթերցող հասարակութեան, իսկ աւելի մանրամասն կերպով։ Արաբատումն Առաջիկայ և որ Այբբենարանը նոր է որպէս նոյն տեսութեան գործնական ճնառ կերպութիւն, որի հրատարակութիւնը մեզանից բազ մից պահանջել են ուսումնատենչ հարցաները։

Այս հրատարակութեամբ մենք ուզում ենք դպրուցում կենդանի խօսքը իշխող հանդիսացնել, այսինքն նախ և առաջ ուսուցանել ընական լիզուն, և ապա թէ այդ աղքիւրից բիշեցնել արտեստականը—գրութիւնն ու ընթերցանութիւնը։ Այս վախճանով ամենայն դաս աւանդում ենք հէնց սկզբից ամբողջացած կապակցեալ հատուածներով (երգերով, ոտանաւորներով, հէռքիաթներով), և ոչ թէ համ ու կտոր անկան քառերով կամ դէսից գէնից կցկցած նախադասութիւններով։ Այդպիսի ամբողջութիւններից մենք էլ յետոյ հանում ենք քարեր և նախադասութիւններ, բայց միշտ սերտ կապակ դասի մէջ տիրող մտանոր պատկերացումների հետ։

Ապա փորձում ենք մեր դպրոցներից խնպատ վարժական այլաժեկ ճէռուայի վերջին հետքերը։ Մեր տառացիչները՝ գրագիտութիւն ուսուցմանելիս մանուկին պրայը տեցնում են գրութեան և ընթերցանութեան բնուրդների մէջ կարծես թէ խոտած կամ նորա ձեռքից բրոնած, և յետոյ խոր մթութեան մէջ բաց են թուղում և գետնին իջեցնում, որպէս զի այսուհետեւ մանուկը ինքը այն բաւզից դուրս գայ, ինչպէս որ գիտենայ։ Անա այնուհետեւ դժբախնարար տարիներ ջարունակ մէջը

անյոյս խարխափում է, որով ինքն էլ է ճանձրանում, ուսուցիչներին էլ յուսահատեցնում է։ Սա ոչ այլ ինչ է, բայց եթէ զեր ևս վերջին շունչը փշող այր-ժէ-ճէ-ռայի անհոգի մեթոդը։ Մենք փորձում ենք մանուկի ձեռքին տալ մի կծիկ, որպէս զի նա կարողանայ անփորձ դուրս գալ բաւղի բոլոր դժուարութիւններից։ Մեր սովորական այրենարանները այդպիսի կծիկ կամ բանալի չեն տալիս։

Վերջապէս դպրոցից վերացնում ենք տիբանը շակ ննջական մեթոդի տիեզ աղմուկները բբբ... գգգ... դդդ... և այլ խացուցիչ աներաժշտական դօղմանները, և տեղը դնում ենք բնական մարդկային ափորժալուր ձայները, այսինքն միայն վանկերը իւրեանց օրգանական ձայնաւերների շնչքով։

Մնում է անելացնել, որ եթէ մենք մեր բացատրութիւններում շատ բան միայն ճարևանցի ենք ակնարկում, ցանկալի է որ ուսուցիչը միշտ իւր նախաձեռնութեամբ ընդլայնէ, ճոխացնէ, լրացնէ իրան երեցած պահանաները։

Մնջրում ենք առանձին ուշադրութիւն դարձնել «Գրագիտութեան հմտութիւնների» վրա, որ մենք Յաւելուածում առանձին պատկերացրել ենք և բնագրութիւն էլ հարկաւոր մասերում այն տեղի պարագաւֆները (§), ծանուցանում ենք։

Ինչ որ այժմ մենք առաջարկում ենք, այն լոկ «Այրենարան» է, որ պէտք է վերջացնել յունվարին կամ փետրվարին, Այսուհետեւ ուսուցիչը կարող է դիմել առաջին ընթերցանութեան գրքերից մէկին—«Ըստ սարերին», «Արեիկին» կամ այլ «Մայրենի լեզուներին»։

Այն ժողովրդական հատուածները, որոնց տակը բնագրում անոն չկայ ստորագրած, հանել ենք «Բնատանեկան աշխարհի», Տ. Ալէքսանդրեանի, Քաջբերունու, Ա. Հայկունու, «Ազգագրական հանդիսին», «Աղբիւրի», «Հասկեցի», և այլ ժողովածուներից։

Ինչպէս ուսուցիչը կը նկատէ ընթերցանովմինը մենք սկսում ենք ծեռազիր տառերով և մի քանի օժանդակիչ նշաններով, որոնք հետզհետէ նուազում են և տեղը դրվում է ընթերցանութեան սովորական պատկերը։

Մի ծանր յիշատակութիւն։ Ես միշտ այն գաղափար՝ եմ ունեցել, թէ գրականական ստեղծագործութիւնները բարոյապէս ընդհանուր հայութեան կուլտուրայի սեպհականութիւն են, և ոչ թէ միայն ստեղծագործող անհատի։ Որ տեղ է վերջանում անհատի իրաւունքը, ի հարկէ դժուար է որոշել, բայց յամենայն դէպս նա չպէտք է արգելք դնէ իւր ստեղծագործութիւնների համար դպրոցի առաջ, Նոր սերունդը միշտ իրաւունք ունի մեր լաւագոյն հեղինակների մատուցած մնունդով մնանվելու։ Ես իմ ընոր Այրենարանը կազմելիս շատ կաշկանդված եմ եղել մեր նորագոյն նիւթական անիմաստ արգելքներով։ Բայց որ մեր հեղինակների անունները գէթ մի մի անգամ չյիշատակիի մասուկների առաջ,—այդ անհնարին էր ինձ համար։ Արդ, յանցաւո՞ր եմ պատժեցէք։

Ինչպէս ընթերցողը կը նկատէ, զրովմիեան տառերի ծեւերով ևս հետևել իմ պ. Գար. Առնեանի գեղագրութեան օրինակներին։

### Սեղաք Մանդինեան։

1909 թ. յունիսի 15  
Թիֆլիս.

ՆԱԽԱՇԱՒԻՔ

1.

## «Ե Ա Ա Խ Օ Տ»

Թաճաւոր վարժութիւն—լսել, տսել, խօսել.

Սիրելիք, մութ գիշերին բոլոր մարդիկ քուն են  
մտնում, աշխարհը հանգստանում է—ձայն, ծըպ-  
տուն, աղմուկ չի լավում. միայն երբեմն հովս է  
փշում, ծառը խշում է, հեռուից հաշում է շու-  
նը, և իսկոյն այս ձայներն էլ ստվում են: Քա-  
նի գնում է չորս բոլորն սկսում է այսպէս լոել,  
արարած աշխարհը կարծես մեռեների թագաւո-  
րութիւն է գառնում: Այդ միջոցին լուսինը սուս  
ու փուս փայլում է երկնքում, ամպի կտորները  
մէկ մէկ սստղերի վրա փովում են ու փարատ-  
վում: Բայց ահա յանկարծ աքաղաղը կանչեց,  
արեգակի ճառագայթները պսպղացին, երկնքը  
կարմրեց, ամբողջ աշխարհը զուարթացաւ, կար-  
ծես թէ ուրախ ուրախ կանչելով. «լուսա-  
ցաւ, լուսացաւ»: Այս ցնծութեան մէջ ամէնքը  
շարժվեցան. ծիտը, հաւը, բոլոր անասունները  
աչքը բաց արին, ժրածան տան տիկինը, մշակը,  
երկրագործը զարթեցին և իւրաքանչիւրը գնաց  
իւր բանին: Իսկ ծոյլ մարդը միայն և ծոյլ աշա-  
կերտը գեռ էլի քնած մնացին:

(Կրկնել տալ):

Այժմ սովորենք «Առաւօտ» ուսանաւորը.

(Տես Յաւելուածում «Գրագիտ. հմտ.» բան. վարժ.)

§ 1, 2).

Լուսացաւ, լուսացաւ.

Լուսն է բարին.

Ծիան է ծառին,

Հաւն է թառին:

Ծոյլ մալրդու քունն է տարի.

Աշխատաւո՞ր, վեր կաց բանի.

Վուազին նախապատրաստութիւն.

Տեսնենք այդ ուսանաւորի մէջ բանի մասեր կան, քանի նախադասութիւններ կան: Դուք չգիտեք, ինչ է նախադասութիւնը, ահա ես ամէն մի նախադասութիւնը ծափով կը նշանեմ: «Լուսացաւ» (ծափ), «Լուսն է բարին» (ծափ), «Ծիան է ծառին» (ծափ) և այլն:

Այդ նախադասութիւնները մենք պէտք չենք պրենք: բայց դուք դեռ ևս գրել չգիտեք, ուստի առ այժմ գծերով կը նշանակենք, այսպէս (հետզհետէ նախադասութիւններն պահղով, ծափ տալով և գիծ քաշելով):

1,

2,

3,

4,

5,

6,

Կարդացէք 4-ր նախադասութիւնը, 2-ր նախադասութիւնը, 6-ր նախադասութիւնը և այլն (Տ. «Գր. հմտ.» բան. § 3):

Երկրորդ նախապատրաստութիւն.

Հիմի քիչ քիչ գիր գրել սովորենք: Առաջ սլոշով տառերը.



(Յոյց տալ այս տառերի տպագրածը շարժուկան տառերով):

Մենք սովորեցինք—լին, լիթ, վեվ, զա, դադ, շա, չա, չէ տառերը: (Աշակերտները այս բոլոր անունները մէկ դասում հազիւ թէ կարողանան սովորել, և հարկ չկայ այդշափ հետապնդելի ինչ ինքը ուսուցիչը պէտք է այն անունները տեղն ու տեղը անդադար կրկնէ, որպէս զի նոքա հետզհետէ տպաւորվին աշակերտների ականջում):

Գրեցէք դադ տառը, ահա այս (ինքը տախտակի վրա գրում է). գրեցէք վեվ տառը, ահա այս. գրեցէք լին տառը, ահա այս և այլն:

Այժմ սովորենք մանր տառերի գրութիւնը.

1 2 3 4 5 6 7 8

\*) Գծիկց առաջ նշանակած տառերն ամենից առաջ պէտք է վարժեցնել, որովհետեւ հետևեալում շատ շուտ պիտի գործադրվին նախ հէնց այդ տառերը:

(Յոյց տալ շարժական տառերով և ընտելացնել պնունները—ուս, ու, յին և այն):

Գրեցէք ու տառը, ահա այս. գրեցէք ու տառը, ահա այս և այն:

## 2.

### «ԳԱԹԱՆ ՈՒ ՓԱԽԱԾԻԲ»

Բանաւոր վարժութիւն—լսել, ասել, խօսել.

Դուք գիտէք, ինչ է գաթա... փախաւն էլ գիտէք... Ո՞վ է շմբում ձեզ համար գաթան ու փախաւը... իսկ ով է ուտում, ի՞, արդարութիւն է, որ մայրիկն ու քոյրիկը աշխատեն, իսկ երեխէքը հա ուտեն և ուտեն... Ասում էք, թէ որ մեծանաք, գուք էլ կաշխատէք ձեր մայրիկի և քոյրերի համար. Այ, ապրիք, ուրեմն ձեզ հաւալ լինի ձեր կերածը...

Մի ոտանաւոր կայ գաթի ու փախաւի մասին; Էն սովորենք. (Տ. քՊ, հմտ., բան. § 1, 2).

Ալիւրը մենք մաղեցինք,  
Նայէ, գաթան ով կերաւ.  
Խմորը մենք շաղեցինք,  
Տես, փախաւն ով կերաւ:

Առաջին ճախապահանութիւն.


Ոտանաւորի նախադասութիւնները գծերով  
նշանակենք.

1, \_\_\_\_\_  
2, \_\_\_\_\_

3, \_\_\_\_\_

4, \_\_\_\_\_

Բայց՝ ամէն մի նախադասութեան մէջ ջոկ ջոկ բառեր կան, որ պէտք է գտնենք: Ասացէք առաջին նախադասութիւնը: Ես այժմ կը նշանեմ բառերը. «ալիւրը» (ծափ), «մենք» (ծափ), «մաղեցինք» (ծափ)—եղաւ 3 բառ: Ասացէք 2-ր նախադասութիւնը: Ես կը նշանեմ. «նայէ» (ծափ), «գաթան» (ծափ), «ով» (ծափ), «կերաւ» (ծափ) —եղաւ 4 բառ և այն: Հիմի այդպէս էլ գծենք.



(Տ. քՊ. հմտ. բան. § 3).

Երկրորդ ճախապահանութիւն.

Մենք գրել ենք պղով և մանր տառերը,  
հիմի գրենք ներքի տառերը.

ԱՌ Ի Զ Ջ Կ Մ Ր ԱՌ Ո Վ

(Շարժական տառեր, անուններ, ջոկ ջոկ գրերի վարժութիւն):

Ապա գրենք երկայն տառերը.

h . b . h . h . h . h . h .

(Նոյնպէս շարժական տառեր, անուններ,  
վարժութիւն):

### 3.

## «Կ Ա Պ Ա Ս Ա Կ»

Բանաւոր վարժութիւն—լսել ասել, խօսել.

Տղեք, աշխարհը մեծ է, մէջը շատ տեսակ կենդանի են ապրում, բայց ամենայն անասուն այնքան քաջ չէ, որ հեշտութեամբ կարողանայ գրտնել իւր կերակուրն ու ապրուստը: Այդպիսի երկշսոտներից մէկն է նապաստակը: Տեսէք այս պատկերը: Սրան բնչն է պակաս: Իւր պլիսից էլ մեծ ականջներ ունի, ուրեմն ամէն ձայն, շշուկ շատ լաւ լոտում է հեռուստից, և վտանգի ժամանակ կարող է զգուշանալ իւր թշնամուց: Լաւ խոշոր, դուրս ցցված աչքեր ունի, ուրեմն ամենայն բան կարող է հեռուստից տեսնելը, մանաւանդ իրա ու տեղիքը: Երկայն յետի ոտներ ունի, ուրեմն երբ հարկաւոր լինի՝ լաւ կը վագէ ու կը փախչէ: Տղայ մարդու պէս բեխեր էլ ունի: Հապա էլ բնչ է պակաս իրան, որ այնպէս վախնուտ է: Սրա վերին շուրթը (պրօշը) ճեղքված է, բայց չգիտեմ թէ ինչու համար:

Սրա գժար ժամանակը ճմեռն է: Այդ միշտին ոչ պտուղ, ոչ բոյս կայ, որ ուտէ. մնում

է որ ծառեր գտնէ և նոցա չոր բուճը կրծոտէ: Այդ ժամանակ ահ ու դողով սար ու ձոր է չափչափում, որ մի բան ճարէ ուտելու, բայց առ հասարակ միշտ դարդակ փորով է մնում և անօգուտ կերպով սկսում է դարձեալ վազվզել, դաշտերը չափչփել: Ահա այդպիսի նապաստակի համար են կապել այս իրաղը.

Նապաստակ,  
Զորի վաստակ.  
Քանի վազես  
Փորբդ դարդակ:

(Տ. «Գր. հմտ.» բան. § 1, 2).

Առաջին նախապատրաստութիւն.

Կամաց ծափով ցոյց տուեք, թէ ոտանաւորի մէջ քանի նախադասութիւն կայ: Զորս. (այս վիսալ պատասխանը առ այժմ պէտք է ընդունելք քանի որ տակաւին ոչ մի հսարով կարելի չէ մանուկներին հասկացնել, թէ մեր չորս տողերը իսր կապէս մի նախադասութիւն են կազմում): Քանի բառ կայ իւրաքանչիւրի մէջ (1—2—2—2): Հիմի տեսնենք, բառերն էլ մասեր ունին: Ահա լսեցէք բառը ծափերով—«նա-պաստակ»: Այս բառը քանի վանկ ունի: Այնպէս էլ գիծը տակից աղեղներով կը բաժանենք.


«Զորի»—քանի վանկ ունի: Տ. «Վաստակ», «Քանի», «Վազես» և այլն ամէնքն էլ երկ-երկու վանկեր ունին: Գտէք վանկերի թիւը «լուսացաւ», «աշխատաւոր», «ալիւ-



ըլք», «մենք», «մաղեցինք» բառերի մէջնեւ գծեցէք նշաններով: (Տ. «Գր. հմտ.» բան. § 3):

Երկրորդ նախապատրաստութիւն:

Մնում են գրելու վերի տառերը.



Կրկնել նաև բոլոր պոչով, մանր, ներքի և երկայն տառերի գրութիւնը:

#### 4.

### «ԱՅՍՈՐ ԱՆՁԱՐ»

Քամաւոր վարժութիւն—լսել, տսին խօսել.

Երբ որ մանուկներն այլ նու խաղալու բան չեն ունենում, սկսում են քերնից քլրկեցնել դարձակ բաներ: Ես մի այդպիսի բլբլոց եմ լսել կուզէք, որ դուք էլ սովորէք: Ահա այս է.

Այսօր անձար,  
Վաղը բանջար.  
Երկու հացին,  
Մէկ դրացին.  
Կատուն մեռաւ,  
Վրան լացին:

Առաջին նախապատրաստութիւն:

Ես պէտք է ձեզ սովորեցնեմ ճայնատր հընչինները. Դուք չպիտիք այդ ինչ բան է, ահա լսեցէք և ինձ հետ կրկնեցէք երկար ճայները.

«այսօր»—այ, օ  
«անձար»—ա, ա  
«վաղը»—ա, ը  
«քանչար»—ա, ա  
«երկու»—ե, ու  
«հացին»—ա, ի  
«մէկ»—է  
«դրացին»—ը, ա, ի  
«կատուն»—ա, ու  
«մեռաւ»—ե, ա  
«վրան»—ը, ա  
«լացին»—ա, ի

Այս բոլոր օձայնաւորները դուք գրել կարող էք: Քայց մի շտապէք գրել: Առաջ ուղարկ եմ մի բան սովորեցնել ձեզ: «Այսօր» ինչպէս գրենք—օ թէ ո. «մէկ» ինչպէս գրենք—ե թէ է, ո թէ ը: «Մէկը ուղիղ է, միւսը՝ սխալ. դուք չգիտէք, թէ մըն է ուղիղ և որը սխալ: Ուրեմն մի շտապէք, և նախ ինձնից տեղեկացէք ուղիղը, որ դուք էլ միայն ուղիղը գրէք: \*)

Հիմի գրեցէք «այսօր», «անձար» և միւս


\*) Այս և հետևեալ վարժութիւնները սկզբներում գուտ մեքենական գործողութիւններ են, ուստի ուսուցիչը համբերութեամբ միշտ պէտք է հետն ասէ. «ահա այսպէս արտասանեցէք», «ահա այսպէս գրեցէք», մինչև որ մանուկների համար մեջնաւյութիւնը հնտղնեն դառնայ գիտակցութիւն:

բառերի ձայնաւորները. չմոռանաք ինձնից հարցնել, ինչ որ երկու կերպ կարող է գրվիլ:

Հետևեալ բառերի մէջ էլ գտէք ձայնաւորները և ապա գրեցէք գտածը—«լուսացաւ», «ծիտ», «ծառ», «թափին», «ծոյլ», «մարդու», «ալիւրը», «մաղեցինք», «նայէ», «խմորը», «շաղեցինք», «փորդա», «դարդակ»:

(Տ. «Թր. հմտ.» բան. § 4, 5, դրաւ. § 1).

Բաղաձայները ձայնաւորների պէս չեն երկարում, առանձին չեն հնչվում. այլ միշտ հետը որ և է ձայնաւոր պէտք է հնչվի, զոր օր. զիմի հետ պէտք է հնչվի կամ ա, կամ ի, կամ ը և այնու Ահա նկարում եմ մի պատկեր... այստեղ կը գրեմ զիմ բաղաձայնը, իսկ վերև բոլոր ձայնաւորները. Հիմի դուք հնչեցէք զիմը այս գծի ուղղութեամբ... միւս գծի ուղղութեամբ և այնու



Ապա գտէք վանկի նախադաս և վերջադաս բաղաձայները, զոր օր. (շարժական տառերով կազմել) ծիտ—ի, նախադաս բաղաձայնով ծի, վերջադասով իս. ծառ—ա, նախադասով ծա, վեր-

ջադասով առ. մնադ—ա, նախադասով մնա, վերջադասներով՝ ար, արդ և այլն:

Եւկրուդ նախադասութիւն.

Գրեցէք մեր գտած ձայնաւորները—այս, ա, ա, ը, ե, ու, ի: Եթէ հարկ լինի ձայնաւորները գրել, նոցանից մի քանիսները ինքներդ կարող էք անսխալ գրել, դոքա են՝ «ա», «ը»: «ու»՝ «ի», «ի»՝ «ի»: Եթէ հարկ միւսները տարակումելի են, և ուրեմն միշտ ինձնից պէտք է տեղեկութիւն ստանաք, թէ բառի մէջ գրէք արդեօք «օ» թէ «ո», արդեօք «ե» թէ «է»:

Լուծեցէք ինձ հետ հետևեալ բառերը և ապա գրեցէք.

Ժիտ—ի, ծի, ծիտ  
ծառ—ա, ծա, ծառ  
Մարդ—ա, մա, մար, մարդ  
Մէկ—է, մէ, մէկ (ոչ «եչ»)  
Զոր—ո, ձո, ձոր (ոչ «օ»)  
Փոր—ո, փո, փոր (ոչ «օ»)  
Մենք—ե, մե, մեն, մենք (ոչ «է»)  
Տես—ե, տե, տես (ոչ «է»)  
Լոյս—ոյ, լոյ, լոյս  
Ժոյլ—ոյ, ծոյլ, ծոյլ  
Հաւ—ա, հա, հաւ (ոչ «վեվ»)  
Քուն—ու, քու, քուն  
Վեր—ե, վե, վեր (ոչ «է»)  
Կաց—ա, կա, կաց  
Բան—ա, բա, բան

Գրածը ցոյց տալ նաև շարժական տառերով,  
Նմուանալով միշտ հետն ասել «նախադաս բա-  
ղաձայն», «վերջադաս բաղաձայն», որպէս զի  
աշակերտների ականջը ընտելանայ այդ անուն-  
ներին»:

Մի և նոյնը գրել տալ աւելի համառօտակի,  
այսինքն՝ նախադաս բաղաձայնն էլ կցորդած ձայ-  
նաւորին:

ծիտ—ծի, ծիտ

ծառ—ծա, ծառ

Մարդ—մա, մարդ, մարդ

Մէկ—մէ, մէկ

Չոր—չո, չոր

և այնու

Վերջապէս գրել տալ հէնց ամբողջ բառերը  
բոլոր բաղաձայներով, առանց լուծելու.

ծիտ

ծառ

մարդ

մէկ

չոր

և այնու

5.

## «ՏԻՌԻԶ ՇՈՒՏԵՐ»

Բանասր վարժութիւնն առել առել, խօսել.

Գիւղական տանտիկնոց համար թխամայր  
հաւը իւր ճուտերով միամբողջ հարստութիւն է:

Այդ պատճառով նա սիրում, խնամում, կերակ-  
րում, պաշտպանում է նոցա: Հէնց որ իւր սի-  
րուն չալ հաւին, տուուզ ճուտերին տեսնում է,  
խկոյն սկսում է գուրգուրալ և ամէն տեսակ  
քաղցր անուններ տալ նոցա. նա իւր ճուտերին  
կոչում է «չալիք-մալիք», յետոց «չալմալալիք»  
կամ «չալ պտորիկ», կամ «չալմապտիկ», գովում  
է նոցա հոտը—«տոշտահոտ», գովում է ճակա-  
ար—«տմպլաճակատ», վերջապէս այդքանից էլ  
չկտանալով՝ գեռ աւելի անմիտ գովասանքներ  
էլ է շարում—«խաշխատպիկ» և այլ այսպիսի  
բառեր: Բայց հաւերը թշնամիններ ունին, մանա-  
ւանդ երեելի է նոցա մէջ աղուէսը, որ փորսող  
մօտենում է կարճիկ ոտերով—սրտի ուզած հաւի  
քարճիկը ուտելու: Հիմի հասկանում էք, թէ ինչ  
կը լինի տանտիկնոց հալը, երբ որ նկատէ իւր  
սիրած հաւերի խորամանկ թշնամուն: Ահա այդ  
մասին երգը:

Հօրէս եկաւ մէկ մէկ ուտի, վույ, վույ,  
Աղուէսն եկաւ լանչիկ, լանչիկ, վույ, վույ,  
Ուտեր ունէր կարճիկ, կարճիկ, վույ, վույ,  
Սիրտը ուզեց հաւի քարճիկ, վույ, վույ:

Վայ իմ չալիք-մալիք, չալմալալիք, չալ  
պտորիկ, չալմապտիկ, տոշտահոտ, տմպլա-  
ճակատ, խաշխատպիկ, տոզիկ ճուտերը

(Տ. «Դր. հմտ.» բան. § 1, 2, 3, 4).

Աւացին նախապարհանութիւն.

Այս բառերի ձայնաւորները գոտէք.

հօրէս—օ, է  
աղուէս—ա, է

«ուստի»—ու, ի  
 «եկաւ»—ե, ա  
 «լանչիկ»—ա, ի  
 «ոտեր»—ո, ե \*)  
 «կարճիկ»—ա, ի  
 «սիրտը»—ի, ը  
 «ուզեց»—ու, ե  
 «հաւի»—ա, ի  
 «քարճիկ»—ա, ի

**Ապա նաև հետեւեալ բառերի.**

«բարին»—ա, ի  
 «ծառին»—ա, ի  
 «թառին»—ա, ի  
 «մարդու»—ա, ու  
 «աշխատաւոր»—ա, ա, ա, ո  
 «ալիւրը»—ա, իւ, ը  
 «մաղեցինք»—ա, ե, ի  
 «նայէ»—այ, է  
 «գաթա»—ա, ա  
 «կերաւ»—ե, ա

\*) Եթէ աշակերտն առէ օ, է, այս ոչ թէ պիտի,  
 այլ կատարեալ ճշմարտութիւն պէտք է համարվի, ո-  
 րովէնեալ դեռ ևս բանաւոր կերպով է լուծում, արտա-  
 սանութեամբ է որոշում, ինչպէս որ ձայները իրօք  
 ինքնին հնչվում են, և ոչ թէ նոյն ձայները զրում է:  
 Ուրեմն մանուկը «ոտեր» բառը կարող է այսպէս լու-  
 ծել արտասանութեամբ. օ, վօ—ե, տե, տեր—ոտեր:  
 Իսկ թէ այդպէս արտասանածը ինչպէս պէտք է զրէ,  
 այդ նա կիմանայ յետոյ զրութեան վարժութիւնից:

«խմորը—ը, ո, ը  
 «շաղեցինք»—ա, ե, ի  
 «նապատակ»—ա, ա, ա  
 «ձորի»—ո, ի  
 «վաստակ»—ա, ա  
 «քանի»—ա, ի  
 «վազես»—ա, ե  
 «փորդ»—ո, ը  
 «դարդակ»—ա, ա  
 «այսօր»—այ, օ  
 «անճար»—ա, ա  
 «վաղը»—ա, ը  
 «երկու»—ե, ու  
 «հացին»—ա, ի  
 «մէկ»—է  
 «զրացին»—ը, ա, ի \*)  
 «կատու»—ա, ու  
 «մեռաւ»—ե, ա  
 «վրան»—ը, ա  
 «լացին»—ա, ի

**Որսեղ էք լսում շեշտը այս բառերում.**  
 «աղուէս», «ոտ», «սիրո», «հաւ», «աշխատաւոր»,  
 «ալիւր», «վաստակ». — միշտ վերջը: Հիմի տե-  
 սէք շեշտը իւր տեղումն է մնում. «աղուէս»—  
 «աղուէսին», «ոտ»—«ոտի», «սիրո»—«սրտի»,  
 «հաւ»—«հաւի», «աշխատաւոր»—«աշխատաւո-  
 րի»; «ալիւր»—«ալիւրի», «վաստակ»—«վաստա-  
 կի»:

\*) Ոտանաւորը պահանջում է, որ Յ վանկի լուծ-  
 վի այդ բառը (դը-ըա-ցի), ապա թէ ոչ կարելի է նաև  
 երկու վանկով լրացնել բառը (դը-ցի):

կի».—ոչ, փոխվեցաւ և դարձեալ գնաց վերջին  
վանկին: (Տ. «Գր. հմտ.» բան. § 7).

Եւկրորդ նախապատրասութիւն:

Գրիր նախ այն բառերը, ուր որ տարակու-  
սելի տառեր չկան, այն ևս նախ առաջին վանկը,  
ապա հետք կցիր երկրորդ (և երրորդ, չորրորդ)  
վանկը.

ու/տի

լան/չիկ

սիր/տը

գա/թա

նա/պաս/տակ \*

քա/նի

կա/տու

լա/ցին

Այդ բոլոր բառերը ինքներդ կարող էք ան-  
սխալ գրել, ինձնից տեղեկանալու բան չունիք:

Իսկ հիմի գրեցէք տարակուսելի տառերով  
բառերը, և տարակուսական տառերը՝ միշտ ինձ-  
նից տեղեկացէք: (Տ. «Գր. հմտ.» գլուխ. § 1, 6, 7).

հօր/էս (հ, օ)

աղ/ուէս (ու, է)

\*) Եթէ աշակերտները դժուարանան վանկ-վանկ  
գրել, պէտք է բառը լիովին լուծել տալ, զոր օր. «կար-  
ճիկ»—ա, կա, կար (գրեն—կար), ի, ճի, ճիկ (արդէն  
գրածին կցեն—ճիկ). «սիրտը»—ի, սի, սիր (սիր), ը,  
տու (մըր), այդպէս և «նախաստակ» և այն, Բայց յե-  
տոյ իսկոն գրել տալ նոյնը ուղղակի ամբողջ վանկե-  
րով. «կար-ճիկ», «սիր-տը» և այն.

ե/կաւ (ւ)

ն/տեր (ո, ե, ր)

կար/ճիկ (ր)

սիր/տը (ր)

ու/զեց (ե)

հա/ւի (հ, ւ)

քար/ճիկ (ր)

բա/րի (ր)

ծա/ոին (ո)

թա/ոին (ո)

մար/դու (ր, դ)

աշխա/տա/ւոր (ւ, ո, ր)

մա/զե/ցինք (ե)

շա/զե/ցինք (ե)

նայ/է (է)

ա/լիւ/րը (ր)

կի/բաւ (ի, ւ)

իսմ/բը—իը/մո/բը (ր)

ձո/րի (ո, ր)

վաս/տակ (վ)

վա/զես (վ)

փո/րդ (ր)

դար/դակ (ր)

այս/օր (օ, ր)

ան/ճար (ր)

վա/դը (վ)

եր/կու (ր)

հա/ցին (հ)

մէկ (է)

դրացին (ը)

մեռաւ (ո, ու)

վրան (վ, ը)

Կազմեցէք «աւ» և «է» բառերի խմբերը.

1) եկաւ

կերաւ

մեռաւ

հաւի

աշխատաւոր

2) հօրէս

աղուէս

մէկ

Խնչ որ աշակերտը պրել է, այն պէտք է վերջը նաև կարդայ: (Տ. «Գր. հմտ.» գրաւ. § 1):

Այդ բոլոր գրածների մէջ լաւ տեսէք, թէ որ հնչիւնները երկու կամ երեք տարրեր նշաններով կարող են գրվիլ:

«հ»—հ, յ

«օ»—օ, ու

«վ»—վ, ւ, ու

«է»—է, է

«վօ» սկզբում—ո

«ը»—ը, ու

«թ» թ, դ

Կարդացնել հետևեալ ձեռագիր նախադասութիւնները. (Տ. «Գր. հմտ.» ընթ. § 2).

«հօրին իկա մի լի լի ու իրի լին

լին»: «Դարուն մի ուս»: «Բնուի

մայս»: «Դի ու իսուի մա նու

կ ուս»: «Ճիրծ ճառին»:

Ապա այս տպագրած նախադասութիւնները.

«Աղ/ուէ/սի սիրտն ուզեց հա/ւի  
միս»: «Ան/ճար-բան/ջար»: «Հա/ցին—  
դրաց/ցին»: «Նա/պաս/տա/կի փո/րը դար/  
դակ է»: «Ա/լիւ/ըը մա/զում են»: \*Ի/մո/ըը շա/զում են»: «Ծոյլ ե/րե-  
խի քուն/ն է տա/րել»:

Կարդալու կանոն.

(Կամաց ձայնով վանկ վանկ հեգել—«Հօ-  
րէս ե-կաւ մէկ-մէկ ու-տի վույ-վույ» և իսկոյն  
բարձր ձայնով արտասանել ամբողջ նախադա-  
սութիւնը լաւ եկէջով, շեշտադրութեամբ և կէ-  
տադրութեան համեմատ: Իսկ եթէ մանուկները  
վանկ վանկ չկարողանան կարդալ պէտք է բա-  
ռերը տեղ տեղ լիովին կազմել տալ՝ ձայնաւո-

բից սկսել տալով, զոր օր, «օ, հօ—է, ըէ, ըէս  
—հօրէս»։ Հենց սկզբից պէտք է վարժեցնել որ  
«ծիսն է» կարդան ոչ թէ «ծիսըն է», այլ «ծիս  
նէ»։ Աստղանիշը բառերի մէջ մի «ը» պէտք է  
փնտռել, զոր օր. Խմնըը պէտք է կարդալ խըմնըը։

Աա Բբ Գգ Դդ Եե Զզ Էէ Ըը Թթ Ժժ Իի Լլ Խխ  
Ծծ Կկ Հհ Զզ Ղղ Ճճ Մմ Յյ Նն Շշ Ոո Զզ Պպ  
Զզ Ոո Մմ Սս Վվ Տտ Բբ Յյ Իւ Փփ Քք Օօ Ֆֆ.

---

Այս բոլորը լոկ նախաշափող էր։ Եթէ աշա-  
կերտները շատ բան հաստատ չեն կարողացել  
ըմբռնել, փոյթ չէ։ Մատուցածը պէտք է նկա-  
տել որպէս նոր ցանած սերմեր, որոնք հետեւալ  
դասերում անշուշտ հետզհետէ կը ծլեն և բող-  
բոջ կարձակեն։

---

## ԽՕՍԵԼ-ԳՐԵԼ-ԿԱՐԴԱԼՈՒ

### ՀՐԱՀԱՆԳ

## 6.

## «ՄԵՂԻ ՈՒՏՈՂԻ ՀԵՖԻԱԹՈԼ»

## ՔԱՆԱԿԻՈՐ»

Ես ձեղ մի հէքիաթ կը պատմեմ: Եղել է չի  
եղել, մի պատ է եղել, մէկ էլ մի թոռնիկ: Է՛,  
դուք գիտէք, պապիկները ինչպէս են սիրում ի-  
րանց թոռներին: Մի օր պապիկը երեխի համար  
առնում է պուլիկով լիքը մեղր: Թոռնիկը մեղրը  
լաստելով տուն ու դուրս է անուժ, մինչև որ  
պուլիկը իստակ դարդակում է, վերջապէս երե-  
խէն էն պուլիկը մի տեղ շպուտում է, իսկ ինքը  
դարձեալ դուրս է գնում փողոցը: Դուրսը ցուրտ  
էր, բուլայ քուլայ ձիւն էր գալիս: Դուք լսած  
կը լինէք, որ ձմեռ ժամանակ ամէն տեղ գայլեր  
են թափառում: Այդ միջոցին հէնց մի քաղցած  
գայլ սարերից իջնում է և գալիս է այդ տեղից  
երեխին փախցնում է: Տան հաւատարիմ թուլէն  
(շունը) ետեից վագում է, գայլի բերանից երեխին  
խլում և տուն է բերում: Նոր պապիկը նկա-  
տում է, որ իւր թոռնիկը սենեակումը չէ, նորա  
ձայնը չի լսվում. իսկոյն դուրս է գնում, որ  
տեսնի, թէ ուր է նա, բայց ի՞նչ տեսնի. շունը  
դաշտից քաշ տալով բերում է երեսը մեղրով  
թաթախած երեխին: Հէքիաթն այստեղ վերջա-

ցաւ: Են ժամանակից սկսած պապիկն իւր թոռնիկին խտած, կամ նորան վեր վեր թոցնելով, էս դանն է ասում:

Չիւնն եկաւ քուլայ քուլայ,  
Պապն ասաց, դանէն ուր ա,  
Գէն ասաց, հրէս տարայ,  
Շունն ասաց, հրէս բերի:  
Պոչիկ թուլա,  
Մեղրը կերար, պուլիկս ուր ա:  
(Տ. «Գր. հմտ.» բան. § 1, 2, 3).

Լեզուի ծանօթուրին.

Գլխատառ, վերջակէտ, հարցական:  
Ի՞նչ ձայնատր էք լսում այս բառերի վերջը. «պապն», «գէն», «շունն», նոյնպէս և «հըրէս» բառի սկզբում: Լսում ենք «ը»:  
(Տ. «Գր. հմտ.» բան. § 5).


Ո՞ր տեղ էք լսում շեշտը այս բառերում, «ձիւնը», «պապն», «գէն», «շունն»: Վերջնաթեր, և ոչ վերջին վանկում:  
(Տ. «Գր. հմտ.» բան. § 7).

ԳՐԱԿՈՒՐ

ա ն մ ն

թ ն

ա օ ր




Թելագրել զրի առնել տալով, այսինքն ուղղագրութիւնը ստուգել տալով.

«Պապն ու թոռը»: «Մեղր ու կարագ»:  
«Գէն ու շունը»: «Մի պուլիկ մեղր»: «Ո՞վ կերաւ մեղրը»:

Հետեւեալ բառերը զրել տալ և «ը»-ով և  
առանց «ը»-ի—պապն, գէն, շունն, հրէս:  
(Տ. «Գր. հմտ.» դր. § 6).

Հաչել—յաջողութիւն, Հաչող շուն—յաջող  
գործ: Աջ, աջող, յաջող: (Տ. բան § 6).

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ



Զիւն՝ է գալիս փաթիլ փաթիլ,  
Թուրքը ասաց՝ \*բանս վատ՝ է,  
Պառաւն՝ ասաց՝ մոզիս կորաւ,  
Գայլն՝ ասաց՝ փորիս դեղ է։

(Տ. «Գր. հմտ.» ընթ. § 2, 3).

## Դ.

### Ա Ր Ե Խ

#### ԲՈՆԱՒՈՐ

Մի մանուկ փողոցում նստած զուարձութեամբ նայում էր զիզի քարերին. Էն քարերի վրայ արևի շողքը ունդ ունդ գոյներով խաղում էր. Յանկարծ ամպն եկաւ փովեցաւ արևի վրա, և շողքը քարերից փախաւ. Մանուկը տիրեց, ուզում էր որ արևը էլի դուրս գայ ամպի տակից. Սկսեց արևին դուրս կանչել բայց ինչ օգուտ. արևն իսկի նորու խօսքը բանի տեղ կը դնէր. Մանուկն ասաց. «Բա որ էդպէս է, ես էնպիսի հազար ու մէկ բաներ պատմեմ քեզ, որ սիրադ ճազի, երեսի քողդ վեր քաշես և դուրս նայես»։ Եւ սկսեց ստից-դորթից դուրս տալ, թէ այ արեգակ, հէրն ու մէրդ եկել են, ախր թուր ու թուանք են բերել, ախր... ախր, ուրիշ էլի շատ յուլունքներ շարեց, մինչև որ արեգակը դուրս եկաւ, քարերն էլի պապղացին. Ահա այդ պատմութեան ոտանաւորը.

(Տ. «Գր. հմտ. բան.» § 1, 2, 8).

Արև, արև, եկ, եկ,  
Զիզի քարին վեր եկ.  
Քու հէր, քու մէր եկել է,  
Թուր ու թուանք բերել է,  
Գոմշու ոտին տուել է,  
Դոան տակին հորել է,  
Մուկն եկել է, հանել է,  
Կատուն եղնէն վազել է։

Արտասանութեամբ չշփոթել «քարին» (գարին), «Թուր» (դուռ), «բերել» (փերել, պերել), «գոմշու» (կոմշու), «տուել» (թուել), «տակին» (թակին): (Տ. «Գր. հմտ.» բան. § 6).

Լեզուի ծանօթուրիւն.

Լսեցէք, ես ինչպէս եմ արտասանում. մուկենեկել, կատու-նեղնէն. եթէ զրէք էլի այդպէս կը զատէք, կը բաժանէք ձայնանիշ գրերը իրարից. Ո՛չ, պէտք է զրէք անբաժան (Տ. գրւ. § 5).

Կրի առնելու համար կանխատուգուրիւն.


Ի՞նչպէս կըգրէք «արև», «քարին», «վեր», «Թուր», «բերել», «հորել» (րէ, և ոչ ու, իսկ «հորել» բառի մէջ նաև ո և ոչ ո): Ի՞նչպէս կը գրէք «տուել», «թուանք» (ու, և ոչ վել կամ յին): Ի՞նչպէս կը գրէք «դռան» (ու, և ոչ րէ): Ի՞նչպէս կը գրէք ոտին («ո» և ոչ «վօ»): Հետեւեալ բառերի մէջ որ տեղ եշ և որ տեղ է է գրվում—«եկ», «եկել», «բերել», «տուել», «հորել», «հանել», «եղնէն», «վազել»։ Այս բոլորը

միշտ մաքում պահել չէք կարողանայ, ուրեմն  
գրելուց առաջ տարակուսականների փարատումը  
ինձնից հարցը եցէք, որ սիալ չգրէք:

(Տ. «Գր. հմտ.» գրաւ. § 6):

Տարակուսելու առիթ առւող տառերը հետ-  
ակեաներ են—ը ո, ո օ, ո (վօ), ու վ ւ, ե է:

ԳՐԱԿՈՐԾ.



Քարին, արկ, վեր, թուր, բերել, հորել դը-  
ռան—դռան:

Տուել, թուանք:  
Ոտին:





Եկ, եկել, բերել, տուել, հորել, հանել, եդ-  
նեն, վազել:

Զիզի քար. քու հեր. գոմշու ոտ. դըռան  
տակին—դռան տակին. եդնէն վազել:

Ծոյլ մարդ. մենք մաղեցինք. ով կերտւ. ձո-  
րի վաստակ. երկու հաց. վրան լացին. հօրէս ե-  
կաւ. հաւի քարճիկ, արոզիկ ճուտ—տոզիկ ճուտ:

(Կանխաւ պէտք է տեղեկանալ միմիայն  
տարակուսականները, և ոչ թէ թեթևամտու-  
թեամբ նաև անտարկուսելին. զոր օր «կաթ» բա-  
ռի մէջ ոչ մի տարակուսելի հնչիւն չկայ, եթէ  
այդ բառը միշտ ձայնով արտասանվի):

### ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.



(Տ. «Գր. հմտ.» ընթ. § 2, 3).

Ա. Պատկանեան.

8.

### «Կ Ա Տ Ռ Ի»

#### ԲԱՆԱԿՈՐԾ

Կատուն սիրելի թէ ատելի կենդանի է: Նա  
ձեզ շատ է ուրախացնում, մանաւանդ իրա կայ-  
տառ մանրիկ ձագուկներով: Երբ որ նա մկներ է  
բռնում, իւր զարհուրելի թաթով միասակար մի-  
ջատներին է շշմեցնում, կծիկի հետ խաղ է տ-  
նում, կամ գնատակ է գլորում, այդ բոլորը ար-  
դարե գուարճալի և սիրելի տեսարան է ներկայ-  
ացնում: Ուստի նորան չէք մոռանում կերակ-  
րել, նորա առջեր կաթ եք զնում, որ լակէ, ժա-  
մանակին ջուր եք տալիս, արքուկ տեղ եք պատ-

բաստում նորա և ձագերի համար, որ մէջը կըծ-  
կըվին և քնեն... Սակայն այդ երկարապոչ անի-  
րաւ կենդանին երբէք շան պէս երախտագէտ և  
հաւատարիմ չէ, այլ փոքր ինչ նեղն ընկած ժա-  
մանակ, ամենայն նենգութեամբ մոռանում է իւր  
կերակրիչին և առանց խղճահարելու չանգրում է  
նորան: Մանաւանդ նա իւր գողութիւններով շատ  
է ձանձրացնում տանտիկիններին. նա սենեակից  
սենեակ, տնից տուն, փողոցից փողոց, կամ ինչ-  
պէս ասում են Թաւրիզից Վան է վազվզում, որ  
եթէ բաց կերակուր գտնէ, դունչը ամանի մէջ  
խոթէ, լզէ, լպստէ և բոլորը մաքրազարդէ: Այդ  
պատճառով նորան միշտ հալածում, պատժում,  
շերեփով են տալիս: Եթէ հարեանի բազից, զոր  
օր. Աղաբեկի տնից ձեզ մօտ մի կատու գայ,  
դուք ի՞նչ կանէք. կը խաղաք, կը զուարձանաք,  
բայց էլի վերջը մի «Փիշտ» կասէք և կը փախ-  
ցնէք նորան: Այդպէս չէ. ահա լսեցէք մի այդ-  
պիսի պատմութիւն.

Միօ, միօ,  
Փիշտ, փիշտ,  
Ո՞մ կատուն ես:  
—Աղաբեկի:  
Ի՞նչ ես ուզում:  
—Չիր ու չամիչ:  
Ո՞մ կը տանես:  
—Իմ ձագերուն:  
Փիշտա, կորի:

Լեզուի ծանօթութիւն.

Ես գրատախոտակի վրա մի նախադասութիւն  
կը գրեմ երկու անգամ. տեսնեմ զանազանու-  
թիւնը կիմանաք. (Տ. բան. § 2).

ում կատուն ես  
Ո՞ւմ կատուն ես:

Արդէն գիտէք, որ հարցական նախադասու-  
թիւնները ինչպէս պէտք է գրվին: Պէտք է սկսել  
գլխատառով, հարցական նշան ստանան, վերջա-  
կէտով աւարտվին:

Նկատել.

(Կատու նես. դանէ նուրա. բայց ո՞չ՝ պու-  
լիկ սուրա, այլ՝ պուլիկը ո՞ւր ա):  
Գրվելով,

Ո՞ւմ կատուն ես: Ի՞նչ կուզես: Ո՞ւմ կը տա-  
նես: Ո՞վ կերաւ: Քանի վազես: Դանէն ո՞ւր ա:  
Պուլիկը ո՞ւր ա: Պուլիկս ո՞ւր ա:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Հի | սմն, մի | րածն, ի | ա | ւածն,  
Հաս | րակ թո | յ, տրա | նու շա | նն  
լ | այն թո | նու ն | ու նյա | լու ո  
Դա | որ ո | յ, տա | ին ո:

Արդան քիսոց ողու պոյ.  
 Հառոր դուշտիկ ուրուրոյոց  
 Դրան չո թիւն յին թին.  
 Ըստնե համ համ յուն:

(Տ. բնթ. § 2, 3).

9.

## «ՍԵՐՄԸՆԱՅԵՐ»

ԲԱՆԱԿԻՈՐ.

Տանը դուք ամենայն օր պատրաստ հաց  
 ունիք: Բայց գիտէք, թէ ով է ցանում, հասցնում,  
 հնձում մեր կերած հացի ցորենը և քաղաք է  
 բերում, որ մենք մեր ճաշը վայելենք: Երկրա-  
 գործը, գիւղի մշակը: Նա օր ու գիշեր իւր քըր-  
 տինքով աշխատում է, և երանի է տալիս այն  
 օրին, երբ որ կարկուտ չի թափվում, մորեխ չի  
 գալիս, կամ գաշտի մուկը չի բազմանում: Նորա  
 բոլոր կեանքը միայն ահ ու զող է և չարչա-  
 րանք: Բայց ում համար նա այդպէս չարքաշ  
 կեանք է վարում. դուք կարծում էք—միայն իւր

գլուխը պահելու համար. ոչ, նա հոգս է քաշում  
 նաև օտարների, աղքատների համար, մինչև ան-  
 գամ անբան անասուններին էլ չի մոռանում: Նա  
 ուզում է, որ իւր աշխատանքով լիանայ և հայ-  
 վանը, և թոշունը, և աղքատն ու ճամբորդ հիւ-  
 րը, և իւր տանեցիք: Բայց ամենից աւելի ցան-  
 կանում է, որ կուշտ լինին իւր ճժերը, իւր զա-  
 ւակները: Դուք որ ամենայն օր հաց էք ուտում,  
 նոյնպէս մտածում էք ուրիշների համար: Ահա  
 հիմի լսեցէք սերմանցանի աղօթքը, երբ որ նա  
 սերմը հողին է յանձնում (Տ. բան. § 1, 2).

Օրինակ Տէր մար Յիսուս Քրիստու:

Էս մէկ բույր անասուն ու բաչունի բաժին,  
 Էս մէկն էլ անձար աղբատի, ձամբորդ զննաղի բաժին,  
 Էս էլ իմ ձրժկների բաժին:

Դու ամօրախ չանես, Աստուած.

Դու իմ տուն ու գուռ Շէ պահես,

Օրինուրին բափես այս արքին, կանանչեցու:

Ո՛վ Աստուած, բարով խեռով բաղենի:

(Տ. բան. § 11).

Էս մէկ բույր, մէկ բուռ ինչ: Մէկ բուռ  
 ցորենը: Իմ ճըժկլըներ իմ զաւակները: Դու  
 ամօթալի չանես, Աստուած. Ինչը ամօթալի չա-  
 նես: Իմ այս աշխատանքը: Կանաչեցրու. Ինչ:  
 Կանաչեցրու իմ արտը:

ԳՐԱԿԻՈՐ.

Բուռը, դույր, տըռուղ, ծառը, թառը, մե-  
 ռու:—Մէկ բուռ ցորենը: Իմ զաւակները: Օր-  
 հնիք աշխատանք: Կանաչեցրու իմ արտը:  
 (Տ. Գրաւ. 7, 1).

Տիսու | լու | ու տիրօնք. Դան հայու,  
 հասցի նրա յառակ, առ ի ուր լուսն  
 շամաւ յառակ. դու բա | ր | ուս ս թառառ  
 Պատրուս, ուր յառ մ | ի ու մ | ի ու ու  
 ուր հայու, թ | ի ու յառակ ուղ | ուր  
 ն | րուն, ուն | եար թ | ի րուն:

Ա/զօթք, բա բե՛խօս, օրհ/նեալ, ա/-  
 մօ/թա/լի ծիս, օր, այս/օր:

[Այս եօթը բառերը ալտազրել տալ. Արտա-  
 գրել տալիս հետեւեալ կերպով լուծել և գրել տալ—  
 ա (գրել ա), զօ-զօթ-զօթք (գրել դօթք). օ-օր-  
 օրհ—(գրել օրհ), նեա-նեալ—(գրել նեալ)]: [Ծայ-  
 բայեղ դէպքում վերջին վանկի գրութեան դրժ-  
 ուարութիւնը կարելի է այսպէս դիւրացնել ա-  
 եա-նեա-նեալ].

«ԽԵՂՔ ՈՒ ՄԻՏՔՔ ԽԵՂԵՐԻՆ ՏՈՒԾԸ ՀԵՐՄՈՒԼ»  
 ԲԱՆԱԿՈՐ.

Մի կին, որ տանը մանր երեխէք ունենայ,  
 իսկ դուրսը հանդում աշխատող ամուսին, որոնց  
 համար որ կերակուր պէտք է պատրաստէ, էլ  
 խաղալու և զուարձանալու ժամանակ կունենայ:  
 Ահա մի հարսիկ կերակուր է պատրաստել, որ  
 տանի տաք տաք հասցնի հնձուոր Մինասին,  
 բայց ի՞նչ անէ մանր երեխերանց, որ տանը մե-  
 նակ են մնում, և ի՞նչ անի հունցած խմորը, որ  
 պիտի թթուի, եթէ ուշանայ ճանապարհին: Ճա-  
 րը կտրած մտածեց վազեվազ գնալ հանդը, կե-  
 րակուր տանել և իսկոյն վերադառնալ մանր տը-  
 ղոց հոգսը քաշելու և ժամանակին հաց թխելու:  
 Այդպէս էլ արեց, զուոր փակեց, իսկ ինքը կե-  
 րակը ամանը ձեռին՝ արագ արագ շտապեց դէ-  
 պի հանդը: Բայց ճանապարհին փորձանք պատա-  
 հեցաւ. տեսաւ որ մի ոսկի բգեզ ճպուոփ պէս  
 այս տեղ այն տեղ թուշըտում էր օդի մէջ: Մեր  
 հարսիկը, այն ահազին կինը, սիրում էր խաղալ  
 ու շատախօսել պատահած տեղը: Թուշտող բգե-  
 զին տեսնելով՝ տաք կերակուրն էլ մոռացաւ,  
 Մինասին էլ մոռացաւ, երեխերանց ու խմորն էլ  
 մոռացաւ, և սկսեց ճանձի հետ ընկնել ու խա-  
 ղալ, և այդպէս մինչև մուժ կոխելը դինինի  
 արեց: Ճաշը թողեց, որ առոչի, Մինասին թողեց,  
 որ շարունակ հունձը քաղէ, երեխերանց թողեց,

որ լաց լինին և սոված կենան, խմորն էլ թողեց,  
որ քացխի։ Ահա լսեցէք այդպէս խելքը կորցրածի  
երգը (Տ. բան. § 1, 2).

Զարկ, զմբուխտ եղնակ,  
ես խաղամ, դու զարկ։  
Ճաշիկ, դու այստեղ պաղի,  
Մինաս, դու այնտեղ քաղի,  
Մարան, դու տաճը լացի,  
Խմոր, դու տաշտում քացխի։  
Զարկ, եղնակ, ես էլ խաղամ։  
Սրե մտաւ,  
Մինչկ իրիկուն դինինի։

Լեզուի ձահօրութիւն.

«Ճաշիկ, քու ճարը տես», «Մինաս, քու ճարը տես», «Մարան, քու ճարը տես», «Խմոր քու ճարը տես»։ Աւելի կարճ այսպէս կասենք. «Ճաշիկ, Մինաս, Մարան, խմոր ձեր ճարը տեսէք»։ — Երբ «տես», և երբ «տեսէք»։ — Երբ ստորակէտներ։

ԳՐԱՀՈՐ.

Զիգարն ասաց. Տղէն տաճը լաց է լինում։  
Անջիգարն ասաց. Լաց է լինում, թող լայ։ Զիգարն ասաց. Կը մեռնի։ Անջիգարն ասաց. Թող մեռնի։ Ճաշիկ, Մինաս, Մարան, խմոր—լուր ձեր  
ճարը տեսէք, իսկ ես դինինի։  
(Տ. «Գր. հմտ.» գր. § 2).

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

«\*Զմ ըուխտ եղնակ, ոսկի՛ եղնակ,  
Զարիկիր, խաղանք միասին»։  
— Ի՞նչպէս խաղանք, սիրուն հարսիկ,  
Ճաշ ես տանում Մինասին։  
«Մինասը թող իր \*հուն/ձն անի,  
Զառ \*թևերդ, դու զարկիր»։

Եղնակն օդում խաղ է անում,  
Հարսի \*գլխով \*պարտում.  
Հարսն ուզում է \*նըան \*բռնել  
Տինինինի վազվում։

Օրը \*մթնեց. \*հնձուոր Մինաս  
Սոված \*մինաց գաշտումը,  
Խեղճ երեխան լացից մեռաւ,  
Խմորը քացից տաշտումը։

Յար. Թումանեան.

11.

«ԹԱՂԿԱՔԱՂ»  
ԲԱՆԱՀՈՐ.

Ինչ որ մենք մինչկ այսօր սովորել ենք,  
այն բոլորը մեր ծաղկանոց է։ Կուզէք, որ այդ

ծաղկանոցից այժմ մի քանի լաւ լաւ ծաղիկներ քաղենք: — Դուք յիշում էք — «Աշխատաւոր, վեր կաց բանի»... ի՞նչպէս կը գրէք աշխատաւոր բառը: Կը գրենք վանկ վանկ — աշխատաւոր: Լաւ մենք գիտենք «լոյս», ուրեմն և «լուսաւոր», գիտենք «վաստակ», ուրեմն և «վաստակաւոր». գիտենք «բանջար», ուրեմն և «բանջարաւոր». գիտենք «ոտ»: «Ճի», ուրեմն և «ոտաւոր», «Ճիաւոր». գիտենք «երես», ուրեմն և «երեսաւոր». գիտենք «շերեփ», ուրեմն և «շերեփաւոր». գիտենք «գլուխ», ուրեմն և «զլիսաւոր» (բայց ոչ «զլուխաւոր»). գիտենք «շապիկ», ուրեմն «և շապկաւոր»: Հապա ի՞նչպէս կը գրէք լուսաւոր, վաստակաւոր, բանջարաւոր, ոտաւոր, ճիաւոր, երեսաւոր, շերեփաւոր, զլիսաւոր, եւ շապկաւոր, — միթէ դարձեալ բառերը վանկ վանկ/երկար բարձկ լուծելով: Ո՞չ, այդպէս չպէտք է գրէք. այլ այդ բառերի վերջին կէսը լուծելու այլ ևս կարիք չունիք, ամէնքն էլ արդէն յայտնի ատոր, ատօր, վերջաւորութիւն են: Այդ բառերից իւրաքանչիւրի մէջ դուք տեսնում էք, որ կայ մի ըուն և մի վերջաւորութիւն: Հետեապէս դուք կը լուծէք բառի միայն բունը, իսկ վերջաւորութիւնն արդէն առաջին օրինակից գիտէք, և ուրեմն այն առանց լուծելու անմիջապէս կը կցէք արդէն գրած բընին: Ուստի նախ կարդացէք հետեալ բառերը, որպէս զի սովորէք ջոկել նոցա միջի բունն ու վերջաւորութիւնը, իսկ ապա նաև գրեցէք այդ բոլորը, ի՞նչպէս որ ձեզ բացարեցի (Տ. բան. § 7)

Դուք լաւ չհասկացաք իմ բացարութիւնները, ահա այժմ կը հասկանաք:  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

(Այս անգամ դիտմամբ նախ կարդացնել ենք տալիս, ապա գրել. և գրութիւն էլ — պարզ արտագրութիւն է):

Աշխատաւոր: Լուսաւոր, վաստակաւոր, բանջար/աւոր, ոտ/աւոր, Ճի/աւոր, երես/աւոր, շերեփ/աւոր, \*զլիս/աւոր, շապկ/կաւոր, բեռն/աւոր, թե/աւոր, թի/աւոր, ահ/աւոր, ուխտ/աւոր, չնորհ/աւոր, անց/աւոր, յանց/աւոր, բախտ/աւոր, նենգ/աւոր, մտ/աւոր, երկր/աւոր, թագ/աւոր:  
ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ.

Արտագրել տալ ընթերցանութեան բառերը:

(Արտագրութիւնն այնպէս պէտք է վարժեցնել, որ մանուկները նախ լուծեն և զրեն ըունը, ապա գրածին անմիջապէս կցեն վերջաւորութիւնը, այսինքն առանց լուծելու, բարձրածայն յայտարարելով, թէ «յայտնի է գրութիւնը». զոր օր. լու-լուս (գրել լուս) — աւոր («յայտնի» է և կրցել գրածին ատօր). վա-վաս (գրել վաս) — տա-տակ (գրել տակ) — աւոր («յայտնի» է և կցել ատօր) և այն: — Լուծելու ժամանակ պէտք է ուշագրութիւն դարձնել և մի քանի բառերի առանձնայակութիւնների վրա, այն է՝ «բանջար» (րէ), «ոտ» (զօ), «երես» (երկու եչ, «շերեփ» (նոյնպէս), «զլիս» (ըթ), «շապկ» (պէ և ոչ թէ փիւր): (Տ. «Գր. հմտ.» գր. § 1).

## «Ճ Ն Ճ Ա Ռ Ի Կ»

ԲԱՆԱՀՈՐ.

Ճնճղուկին մենք ասում ենք «ծիտ»։ Ծիտը  
մեծ թռչուն է... Այդպէս էլ րոր շատ փոքր  
թռչուն է, որի համար ծիծաղով ասում են, թէ  
աժդահա մեծ զուշ է... Տանու հաւը, հնդկահաւը,  
կաքաւը, բաղը, սազը, փասխանը—ամէնքն էլ  
մեզ սնունդ տուող թռչուններ են. ծիտն էլ այդ-  
պէս է... Ասած է—ծիտն ի՞նչ է, որ նրա եղն ի՞նչ  
ըլի. բայց ահա լսեցէք մի երգ, որ մեզ պատ-  
մում է, թէ ինչպէս մարդկանց մեծ բազմութիւ-  
նը մի ճնճղով լաւ քէֆ է արել։ (Տ. բան. § 1, 2).

Կուրեր ցուեն փուեցի՝ ջորցնելու համար,  
Ճնձուղնեն եկան ծողվան՝ ուտելու համար,  
Քարը վեր կայա խփեցի՝ սպանելու համար,  
Գասարի դանակն ուզեցի՝ մորքելու համար,  
Մեծ պղինձն ուզեցի՝ եփելու համար,  
Ողջ բաղար մեծարեցի ուտելու համար:

Այ ճնձուղիկ,  
Կարմր տոտիկ,  
Սպիտակ փորիկ,  
Ուտեն կուտիկ,  
Խմեն ջրիկ,  
Սուռի եղրիկ,  
Պոտիկ մստիկ։

Եզրուի ծանօրուրին.

«Յորենը փրեցի», «Ճնճուղներն եկան», «քա-  
րը խփեցի», «դանակն ուզեցի», «քաղաքը մե-  
ծարեցի»—սրանք նախադասութիւններ են, ո-  
րոնք պատմում են հաստատում են, թէ ի՞նչ փը-

ուցի, ով եկաւ, ի՞նչ խփեցի, ի՞նչ ուզեց, ում  
մեծարեց։ Հիմի ես ձեզ ուրիշ տեսակ նախադա-  
սութիւններ կասեմ։ «Աշխատաւոր, վեր կաց բա-  
նի», սա էլ մի բան է պատմում, մի բան հաս-  
տատում. ոչ, սա հրամայում է—վեր կաց, մի՛  
քնիր։ «Դանէն ուր ա», իսկ սա նոյնպէս հաս-  
տատում կամ հրամայում է. չէ, ոչ հաստատում  
և ոչ հրամայում է, այլ հարցնում է։ Ի՞նչ նշան-  
ներով ենք որոշում նախադասութիւնները...  
(Տ. բան. § 12).

ԳՐԱՆԱՀՈՐ.

Հարցական նախադասուրիւններ.

Ո՞վ կերաւ։  
Քանի՞ վազես։  
Պուլիկս ուր ա։  
Ում կատուն ես։

Հրամայական նախադասուրիւններ.

Վեր կաց բանի։  
Եկ, Եկ։  
Զիզի քարին վեր եկ։  
Բաց երեսդ, արեգակ։  
Փիշտա, կորի։  
Զարկ, եզնակ։  
Ճաշիկ, դու պաղի։

Հաստատկան նախադասուրիւններ.

Լուսացաւ։  
Ծիտն է ծառին։  
Կատուն մեռաւ։

Սիրտը ուզեց հաւի քարճիկ:  
 Զիւնը եկաւ:  
 Մեղրով միքը քթոցն ես:  
 Մէկբուռ չամիչքեզ կը տանք:  
 Շերեփն իջաւ ճակատին:  
 (Տ. «Գր. հմտ.» գր. § 2, 3).

### ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Ի/շիս բար/ձած տանձ, \*ինձոր,  
 Ես \*գնա/ցի Գո/մա/ձոր:  
 Վե/րա/դար/ձիս մէ/կէլ՝օր  
 ձամ/փին զար/կի մի մեծ լոր:  
 Էդ աժ/դա/հա մեծ \*ղջին  
 Մի կերպ բար/ձի իմ ի/շին:  
 Ու/րախ՝ուրախ՝ե/կայ տուն,  
 \*կնունք՝արի իմ որ/դուն:  
 էլ տիրացու, էլ տէրտէր,  
 Սա/նա/հէր՝ու սանա/մէր,  
 \*կնքա/հէր՝ու կնքամէր,  
 Քեօխ/վա/կին՝ու քեօխվամէր,  
 Դուռ՝ու \*զը/կեց, \*ինամի—  
 էլ ինչ \*թուեմ մի առ մի—  
 Եօթը հէրանք, Եօթը մէրանք  
 Թափանք էդ լո/րը կերանք.  
 Հըմա կերանք, հըմա կերանք:

(Տ. ընթ. § 2, 3).

Ա. Ինկոյեան.

13.

### «ԱԹԻՒԺԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ»

#### ԲԱՆԱԿՈՐ.

Շատ մարդիկ ուզում են երջանիկ, բախ-  
 տաւոր, հարուստ լինել, լաւ կեանք վայելել,  
 բայց ձեռքը ծալած նստում են և չեն աշխա-  
 տում: Ո՞վ կը տայ մարդուն երջանկութիւն, բախ-  
 տաւորութիւն, հարստութիւն... Աստուած,—ոչ:  
 Աստուած մեզ արդէն ձեռք ու ոտք է տուել,  
 խելք ու հանձար է պարզեցել, խիղճ ու ազնւու-  
 թեամբ է զարդարել մեր հողին, որպէս զի ու-  
 րիշին չզրկենք, չկեղեքենք, ուրիշի դադած աշ-  
 խատանքով չապրենք, չգողանանք, չյափշտակենք,  
 մեր հալալ քրտինքի վաստակը վայելենք: Մենք  
 մեր անձի յուսով պէտք է ապրենք: Բայց ահա  
 կարդացէք մի անպէտք մարդու պատմութիւնը,  
 որ գանձի յոյսերով և անիրաւութիւններով է  
 ուզում ապրել:

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ. (Տ. ընթ. § 1, 2, 3).

Ե/զել է մէկ մարդ, շատ հա/րուստ,  
 ու/ներ: Նա ծուռ-մուռ՝ ապ/րելով, ինչ՝  
 ունէր չունէր կերաւ, \*կնտեց դատարկ:  
 \*Տնից հաց մաց \*կ/տր/վեցաւ. մէկ ձեռքը  
 դրեց ծոցը, մէկ ձեռքը երեսին, չէր իմա-  
 նում, թէ ինչ անի: Ալ վախ անելով հալ/-  
 վում մաշ/վում էր:

Բա/րե/կամ/ներն՝եկան, \*զլիին հա-  
 ւաք/վեցան, և նոցանից ծերը առաւ՝ ու ա-  
 սաց. «զու մեղք՝ ես զործել, քո գան/ձա/-

տու/նը քե/զանից \*խրտ/նել փա/խել է. վեր  
կաց, \*գնա քո զանձա/տան ետև, գուցէ էլի  
\*գտ/նես և ա/ռաջ/ուայ պէս բախտա/ւոր/՝  
վես:

Մարդը \*զլիսի ընկաւ, վեր էլոցաւ  
սարու/ու քար ընկաւ, գիշեր ցերեկ իւր զան-  
ձա/տունը \*վինտրեց: Մի գիշեր երա/զում  
տեսաւ, որ իւր զանձատունը, բարձր սարի  
վրա, \*զլուխը \*ծոած, \*նստած է, և նա  
էլ ախ ու վախ է անում: Զարթ/նե/լիս այն  
սարի ճա/նա/պար/հը \*բռնեց:

Ճանապարհին մի ա/փւծ տեսաւ: Ա-  
ռիւ/ծը մարդուն կան/չեց հարց/րեց. «Ո՞ւր-  
ես գնում»: Մարդն ասաց. «Գնում եմ  
\*զանձատունս \*գտնեմ:» Առիւծն ասաց.  
«Ես գիտեմ, որ քո զանձատունը շատ զի-  
տուն է. Նորա/նից հարցրու, ես ինչո՞վ եմ  
հիւանդ, ահա եօթը տարի է չար/չար/զում  
եմ:» Մարդը խօսք տուեց, գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ մի այ-  
դի, որ հազար \*ն/մուշ \*պտ/ղով լիքն էր.  
Քանի քաղեց որ ուտի, տեսաւ որ լեզի են:  
Այգու տէրը \*նշմա/րեց, այս մարդու վրա  
բարկացաւ, յետոյ հարց/րեց. «Ո՞ւր-  
ես զը-  
նում:» Մարդն իւր դարդը պատմեց այ-  
գու տիրոջ: «Դէ, թէ որ այդպէս է, քո զան-  
ձատնից հարցրու, \*իմ այգու դարմանն-  
ինչ է, որ ինչ անեմ չանեմ, պտուղները

դառնակեն հասնում:» Մարդը խօսք տուեց,  
գնաց:

Գնաց, գնաց, հասաւ մէկ շէն-\*շ/քեղ  
քեր դին. \*մտաւ մէջը, տեսաւ որ մէկ ջա-  
հիլ աղջիկ պալատի մէջ ման է զալիս: Նա  
այս մարդուն հարց/րեց. «Եղբայր, ուու այս-  
տեղ ի՞նչ բան ունիս». մարդն իւր զլիսի ե-  
կածը պատմեց:

Աղջիկը դարձաւ ասաց նորան. «Ես շատ  
գանձ \*հա/րս/տու/թիւն ունիմ, շատ մալ-  
ու ապրանք. բայց մի ցաւ ունիմ, որ զի-  
շեր ցերեկ վիշտ է \*սրտիս: Թէ որ քո \*զան-  
ձատ/նից ինձ համար մի ճար հարց/նես, ա-  
մենայն տեսակ բարութիւն կը տամ քեզ»:  
Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, և ահա տեսաւ, որ իւր գանձա-  
տունը սարի \*զլիսին \*նստել է: Բարեւ տուեց,  
նստեց. շատ զանգատ արեց, վերջը \*ապրո-  
պրած բաների ճարը հարցրեց, ամէնի պա-  
տասխանն առաւ:

«Դէ, հիմի վեր կաց, գնանք», ասաց:  
— Դու առաջ գնա, ես էլ կը գամ, ա-  
սաց զանձատունը:

Մարդը դարձաւ, առաջ այն աղջկան  
տեսաւ, ասաց. «Քո դեղն այն է, որ դու  
մէկ \*կտրիճին ամուսնանաս, քո վիշտն ու  
ցաւը կանցնի»:

Եկաւ այգին, տիրոջ կանչեց, ասաց. «Որ  
առուից որ այգու ջուրը զալիս է, այն ա-

ոռւի մէջ ոսկու հանք կայ, ոսկ ու \*փշրան-  
քը \*ջրի հետ գալիս է, ծառերը ծծում են,  
դառնանում են: Կամ \*ջրի առուն փոխիր,  
կամ հանքը փորիր և դուրս հանիր, \*պառուղ-  
ները կանուշանան»:

Եկաւ առիւծի մօտ, նստեց մարդու,  
պատմեց իւր գանձատան հանդիպումը, այ-  
դու տիրոջ ու աղջկայ բաները: Առիւծը  
հարցրեց. «Աղջիկը քեզ լաւութիւն չարեց»:  
Մարդն՝ ասաց. «Ինչպէս չէ, ասաց—Արի,  
դու ինձ առ, նստենք մէկ տեղ \*Աստ/ծու  
բարութիւնը վայելենք:—Ես համաձայն չե-  
ղայ: Միթէ ձեռք ու \*ոտքս կապէի և մի  
ծանր բեռի պէս աղջկայ հոգմն ու դարդը  
քաշէի»:

Առիւծը հարցրեց. «Ոյգու տէրն՝ ի՞նչ  
լաւութիւն արեց»: Մարդն ասաց. «Այգու  
տէրը ոսկու հանքերը հանեց, կօլօլ ոսկի դա-  
ռան, ինձ տուեց: Ես չառայ, ասացի. Ո՞վ  
այդքան բան կը շալիէ և տուն կը տանէ»:  
—է, ասաց առիւծը, ինձ համար ի՞նչ  
դեղ ասաց: Մարդը պատասխանեց. «Քեզ  
համար էլ ասաց, որ եթէ մէկ անխելք մար-  
դու գլուխն ուտես, կը լաւանաս»:

Առիւծը սորա ասածները օրինաւոր  
կերպով վեր դիր արեց, թաթը պարզեց,  
մարդու գլուխը \*բոնեց, գետնով տուեց,  
\*փշրեց կերաւ: Ասաց. «Ես իմ Աստուած,  
քեզանից էլ անխելք մարդ այս աշխարհում  
չեմ գտնի»:

— ՞ ՞ ՞ ՞ ՞ ՞ —

## ԳՐԱՒԹՅՈՒՆ.

Գրի առնել տալ հետևեալ բառերը—մարդ,  
եղբայր, ախալէր, բարձր, գարձաւ, գտնեմ, այ-  
գի, աղջիկ, առաջ, տիրոջ:

Բար/ութիւն, լաւ/ութիւն, դառն/ութիւն,  
ան/կանք/ութիւն, տիր/ութիւն, բն/ութիւն, հա-  
րստ/ութիւն, մարդ/ութիւն, անուշ/ութիւն, համ/-  
աձայն/ութիւն, բար/ե/կամ/ութիւն, ծեր/ու-  
թիւն, բռն/ութիւն, եղել/ութիւն:

Բով/անդակ, այլ/անդակ, օժ/անդակ, կարկ/—  
անդակ, ասպ/անդակ, սուրհ/անդակ, բարձրաւ/—  
անդակ, սարաւ/անդակ,—քանդակ, վանդակ,  
բանդակ, Մ/անդակ/ունի:

Բեռն, բեռն/աւոր, բեռն/աւորութիւն.  
ահ/աւոր/ութիւն, ուխտ/աւոր/ութիւն, շնորհ/—  
աւոր/ութիւն, բախտ/աւոր/ութիւն, մտ/աւոր/ու-  
թիւն, թագ/աւոր/ութիւն, մեղ/աւոր/ութիւն,  
բռն/աւոր/ութիւն, փառ/աւոր/ութիւն:

Մէկ ստորակէտ, մէկ էլ վերջակէտ:  
(Տ. բան § 12, «բայց», «այլ»).

Ծոյլը սիրում է ուտել՝ չի սիրում աշխատել:  
Սիրում է ուտել, լայց ոչ աշխատել:  
Ուտեմ տիտեմ, նունում նանամ:  
Ով տուն չի շինել, տները բանովի գիտէ:  
Խօսքը հարստութիւնը չէ, խօսքը կառավարելն է:  
Խօսքը հարստութիւնը չէ, այլ կառավարելը:

Դու ասա, գնա, արա, կարգա, խաղա.

Նա կարգայ, զղջայ, հարստանայ, հաստանայ:  
(Տ. Գրաւ. § 1, 6, ընթ. 2):

## «ՔԵՂՅԵՒԹ ՄԵՐԴՈՒԻ ՀԱՆԵՔՆԵՐԸ»

ԲԱՆԱԿՈՐ.

Երբ որ դուք քաղցած եք լինում կամ ալեկ-  
լոր նստած եք՝ շապիկ չունենալով, դուք ի՞նչ  
եք անում: Դուք... միայն լաց եք լինում: Բայց  
զիտէք, թէ ժողովրդեան մէջ քանի քաղցած ու  
տկոր մարդիկ կան: Կարծում եք ամէնքը նստած  
արտասուքներ են թափում: Ոչ, շատերը հա-  
նաքներով են մթնացնում իրանց ոև օրը, մին-  
չե որ գործ գտնեն և իրանց հալալ աշխատան-  
քով ու վաստակով կարողանան ապրել: Անա լսե-  
ցէք, գեղացին նեղ օրին ինչ հանաքներով է կըշ-  
տացնում իւր դարդակ փորը.

Բարեկամներ մեր քէփ հարցուցին,  
Քէփ չկար, տղերքը նստան, տիրեցին:  
Ալիւր չունէին, որ խմոր հունցէին,  
Հաց չունէին, գնացին թռնիր վառեցին:  
Է, պէտք է ցանէինք, որ ցորեն հասցնէինք.  
Գնացինք, դուռ ու զրկեց ժողովեցինք,  
Երկաթ գտանք, մի խոփ շինեցինք:  
Էն խոփով մի հերկ շրջեցինք:  
Թէ Աստուած ուզեց՝ ցորեն կունենանք.  
Ցորնի արով մի ամբար շինեցինք:  
Մկներն իմացան, ամբարը ծակեցին,  
Միջի եղած չեղածը իստակ կրծոտեցին:  
Թէ դարդակ էինք, էլի դարդակ նստեցինք.

— Ել ի՞նչ քէփ, ել ի՞նչ ուրախութիւն:  
Հայ, նա-նա, հայ, նա-նա-նա:

Հիմի լսենք օխար տարուայ մաշած շապկի  
վէպը.

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Իմ շապիկը Գանջու թել է,  
Շատ \*քրտնելուց ցափ փթել է.  
Ախ, իմ շապիկ,  
Վախ, իմ շապիկ,  
\*Միսս բաց է,  
Զան, իմ շապիկ:

Կուրծք-օձիքդ իստակ խաս է,  
Կարիդ թելը բարակ կազ է:  
Այ, իմ շապիկ,  
Կարմիր շապիկ,  
Ի՞նչ չուտ եղար  
Ծըփիկ, ծըփիկ:

Օխար տարի քեզ հագել եմ,  
Ես \*մարմինս Կպարտկել եմ:  
Ախ, իմ շապիկ,  
Զան, իմ շապիկ,  
Էլ ոնց հագնեմ  
Ես քեզ հիմիկ:

(Տ. բան. § 12). Օակ. Աղաբար.

ԳՐԱԿՈՐ.

Հաց կայ, բերան չկայ. բերան կայ, հաց  
չկայ: Հաց կայ, բայց ուտող չկայ. ուտող կայ,  
բայց հաց չկայ: Ուտող բերան: Մարդ կայ՝ հա-

զար արժէ, մարդ կայ՝ մէկ չարժէ: Մարդ կայ,  
որ հազար արժէ, մարդ կայ, որ մէկ էլ չարժէ:  
Սաղն ի՞նչ իմանայ՝ կաղն ինչ է: Սաղն ի՞նչ ի-  
մանայ՝ թէ կաղն ինչ է:

Ով տեսաւ, զարմացաւ:  
Ով տեսաւ, նաև զարմացաւ:  
Ինչ կուզես՝ արա:  
Ինչ կուզես, այն արա:  
Ընտրիր՝ որը որ կուզես:  
Որը որ կուզես, այն ընտրիր:

Շապիկս կը մաշեմ, շապիկդ կը մաշես,  
շապիկը կը մաշէ:  
Շապիկս չեմ մաշի, շապիկդ չես մաշի,  
շապիկը չի մաշի:

## 15.

### «ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳԵՐ»

ԲԱՆԱՀՈՅ.

Մեր ժողովուրդը սիրում է բարեկենդանին՝  
հարսանիքի օրերին՝ ուրախանալ, իւր դարդերը  
մոռանալ, խաղալ ու երգեր ասել: Նա աւելի իւր  
այգու, վարուցանքի երգ է երգում: Ահա այդ-  
պիսի երգերից մէկը.

«Գնացէք տեսէք, ով է կերել այգին:»  
Գնացին տեսան—այծն է կերել այգին.

Այծն ու այգին— — — ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ:  
«Գնացէք տեսէք, ով է կերել այցին:»  
Գնացին տեսան—գայլն է կերել այցին.  
Գայլն ու այծը, այծն ու այգին—ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել գայլին:»  
Գնացին տեսան—սուրն է կերել գայլին.  
Սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին—  
— ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել սուրը:»  
Գնացին տեսան—ժանգն է կերել սուրը.  
Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այ-  
ծը, այծն ու այգին— — ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել ժանգը:»  
Գնացին տեսան—իւղն է կերել ժանգը.  
Իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը, սուրն ու գայ-  
լը, գայլն ու այծը, այծն ու այգին—  
— ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել իւղը:»  
Գնացին տեսան—մուկն է կերել իւղը.  
Մուկն ու իւղը, իւղն ու ժանգը, ժանգն ու սու-  
րը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու  
այգին— — — ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել մկան:»  
Գնացին տեսան—կատուն է կերել մկան.  
Կատուն ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժան-  
գը, ժանգն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու  
այծը, այծն ու այգին— — ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է տարել կատուին:»  
Գնացին տեսան—հարսն է տարել կատուին.  
Հարսն ու կատուն, կատուն ու մուկը, մուկն ու  
իւղը, իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը, սուրն

ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այզին—  
ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ։

«Գնացէք տեսէք, ով է տարել հարսին։»  
Գնացին տեսան—փէսէն է տարել հարսին։

Փէսէն ու հարսը, հարսն ու կատուն, կատուն ու  
ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժանգը, ժանդն  
ու սուրը. սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն  
ու այզին— — — — ձեզ բարեկենդան,  
մեզ բարի Զատիկ։

ԸՆԹԵՑԱՆՈՒԹԻՒՆ.

Կրպօն խփէ, խեպօն խաղայ,  
Ակլէ տիւկլէ տնազ է,  
Էծիկ մէծիկ բգէզ է,  
Օֆ, տիւֆ, նաղարայ,  
Հար, բարա, հարիսա.  
Քաթիպի կօճակ,  
Պինդ ֆօլօճակ,  
Ճրթ, պըթ։

ԳՐԱԿԱՌ.

Կրպօ, խեպօ, օֆ.  
Զօրք, զօր/ութիւն, զօր/եղ, զօր/աւոր, զօր~  
անալ, զօր/ահանդէս, զօր/ապետ, ան/զօր մեծա~  
զօր, հ/զօր։

Սէր, սիր/ելի, Սիր/ական, ընկերա/սէր, ջա~  
նա/սէր։

Երախտա/գէտ, տ/գէտ, գըտա/գէտ, հնարա~  
գէտ, ան/գիտ/ակ։

Տնա/շէն, քարա/շէն, շէն/անալ, շէն գիւղ,  
շէն տուն։

Գէշ (վատ), գէշանալ, գէշ/ութիւն։  
Գէշ (լէշ), գիշ/ատիչ։  
Մայր—մէր, սանամէր.  
Հայր—հէր։  
Եղբայր—ախպէր։  
Վայր ընկնել—վէր ընկնել։  
Գայլ—գէլ։  
Ծայր—ծէր։  
Զայն—ձէն։  
Երեխայք—երեխէք։  
Այս, այդ, այն—էս, էդ, էն։  
Այծ—էծ։  
Յոյս, յուս/ալ, յուս/ահատութիւն, Յուս/իկ,  
ան/յոյս։

Արձակ, համ/արձակ, ընդ/արձակ, արձակ/ել.  
յարձակ/վիլ։

Բարձ, բարձ/ել, համ/բարձել, չամ/բարձում։  
Գոհ, գոհ/ութիւն, դժգոհ։

(Տ. գրթ. § 4, բան. § 7, ընթ. § 4).

## I6.

**«Զ Բ Ա Պ Ա Յ»**  
ԲԱՆԱԿԱՌ.

Դուք տանը տեսել էք ձեռքի աղալու քա~  
րերը. կարելի է ջրի ափին մեծ ջրաղացն էլ տե~  
սել էք (ահա պատկերը). Այն տեղ կան երկու  
մեծ տախտակ քարեր, որ երկանաքար են կոչ-

վում և ջրի ուժով պտտվում են, ամբողջ շէնքը  
դղրդեցնում են: Մէջը ձագարածե փոս կայ, ուր  
ցորեն են լեցնում, իսկ երկանաքարերը իրար  
հետ քսվելով՝ ցորենը աղում են, փոշի են դաշճ-  
նում, և այդպէս տկի բերանից անդադար ալիւր է  
դուրս թափվում:

Վերին տախտակ՝ թրիկ թրիկ,  
Ցածրի տախտակ՝ վըխկ վըխկ,  
Մէջն է տուտուց տուտլուտուզ,  
Տըկի բերան վըզ վըզ:

(Տ. բանաւորի բոլոր §§-ը)

ԳՐՈՒԹԻՒՆ.

Զրաղացի համար ասում են.

Տրտինգ կանի դամաճ դամաճ,  
Սշմարհ կուտի կամաց կամաց:

Նրա քարերի համար էլ ասում են.

Երկու սար,  
Կրծում են իրար:

Փշանք, զրկանք, լուտանք, մաղթանք, ա-  
ղաչանք, պաղատանք, արհամարհանք, զգուանք,  
տականք, տանջանք, չարչարանք:

Ծուռումուռ, հաց մաց, բարբառ, սարսուռ,  
արհամարհանք, սպասապուռ, պէսպիսութիւն,  
սուսուփուռ, ծփծփալ, չափչփել, խազխզել, թափ-  
թըփել, զլիէիզլուխ:

Հանելուկ, բազուկ, տաքուկ, փափուկ, տըզ-  
րուկ, ջրջրուկ, հեղուկ, մանուկ, հարցուկ, շըռկ,  
յատուկ, կապուկ:

(Տ. գրութեան բոլոր §§-ը).

## ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Մի տուն ունինք, տան նման չի.  
Գետի ափին, մեծ ժայռի տակ,  
Արկրզած է մէնը-մէնակ:  
Ժիշեր ցերեկ բայզուշի պէս  
Չայն է հանում, գոռում այսպէս—  
Թրը խկ, չըը խկ,  
Վը շտ, ճը շտ...

Առուն բարձրից ցած է թռչում,  
Պատը ծակում, միջոն անցնում:  
Յատակումը դզրդոց է,

Շըրըմփոց ու թըրըխկոց է:  
Տան մէջ երկու ուժեղ գազան,  
Մինը տակին միւսը վրան,  
Առիւծի պէս մոնչում են,  
Իրար ըրեխ կրծոտում են...  
Մրանք մարդ չեն, ոչ արջ, ոչ գայլ,  
Ինչ էլ որ տաս, քիչ է դարձեալ,  
Հարամի են իսպառ քաղցած,  
Էլ չեն լսում ոչ խօսք, ոչ լաց:  
Դուրս են մղում իրանց փորից  
Կերակուրը, փոշի դարձած...

Այժմ ասէք, այդ ինչ տուն է,  
Որ մինչ այսօր էլ կանգուն է:  
Ա. Արարատեան.

(Տ. ընթերցանութեան բոլոր §§-ը).

## 17. «Կ Ա 2 Ա Ղ Ա Կ» ԲԱՆԱՀՈՐ.

Սպիտակախառն ու փետուրներով կաշաղա-  
կին շատ անգամ տեսնում էք: Այդ թռչունը շատ

Երկայն տուտ ունի, ուստի դրա համար ասում են,  
Խօջան եկաւ,  
Գազը ետքին:

Դա ագռաւների պէս ամենայն բան ուտում  
է—միջատ, ճճի, խղունձ, մուկ, գէշի միս, սեր-  
մեր, բակլա, սիսեռ և այն: Եթէ մի փայլուն  
բան գտնի—պղնձի կտոր, ապակի, գդալ—առ-  
նում փախցնում է: Զարմանալի կերպով մարդու  
ասած խօսքերն է կրկնում, միշտ չաշանակի պէս  
կարկաչում, կամ կայ-կայ է ասում, կամ՝ չկայ-  
չկայ: Նա դռնէդուռ ընկնում է իւր չկայ-չկայ  
աղաղակն է հանում, յետոյ զայրանում և վշտա-  
ցած ձայն է տալիս «չկայ-չկայ»... Այսօր պէտք  
է կարդանք ու գրենք այնպիսի ոտանաւորներ,  
որոնք կաշաղակի, Գորտերի և Ճախարակի պէս  
ձայներ են հանում:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Այ չաշանակ  
կաշաղակ,  
Սիրուն թռչնակ,  
Սարսարակ,  
Ի՞նչ ես ընկել դանէ դուռ,  
Բագ ու պարտէզ ու կտուր,  
Եւ մտքումդ էդ ի՞նչ կայ:  
Քանի՞ ճշաս,  
Կըչ-կըչաս—  
«Չկա-չկա»,  
Չկա, չկա...»  
Մէկ էլ յանկարձ  
Զայրացած,

Աւելի խիստ,  
Անհանգիստ,

Երկար պոչով շարժելով,  
Ի՞նչ ես բացում կտուցդ  
Եւ վրդոված հոգուցդ

Չայն ես տալի  
Վշտալի—  
«Չկա-չէ, չէ  
Չկա-չէ, չէ...»

Յակ. Աղաբար.

ԳՐԱՒՈՐ.

Թելադրել, կանխաւ ուսումնասիրելով բա-  
ռերի ուղղագրութիւնը («Քեռին»—գլխատառ, եշ,  
ուս և այն):

ԿՈՐՏԱՐԻ ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ:

«Քեռին մեռել է, քեռին մեռել,  
մեռել է, մեռել է»:

—Ե՞րբ, Ե՞րբ, Ե՞րբ:  
«Մէ...կէ...կէլ օրը, մէկէլ օրը»:  
—Ղարթ, ղարթ, ղարթ:

Մէկը գրատախտակի վրա է գրում, ամէն-  
քը համեմատում են և սրբագրում սխալը:

—

Հետեւալը արտագրել տալ.

Ճըլվըստ, ճըլվըստ, ճախարակ.  
Ես հաստ մանեմ, դուք՝ բարակ,  
Ես մեղք ուտեմ, դուք՝ կարագ.  
Շատ մանողին շալ շապիկ  
Քիչ մանողին չիթ շապիկ:  
Յար. Թումանիսին.

Աւտագրութեան կանոններ.

Ամէն մի վանկը հանդարտ ձայնով ուսումնասիրել, թէ մէջն ի՞նչ տարակուսական տառեր կան, ի՞նչ նշան (ստորակէտ, վերջակէտ, շեշտ և այլն), ե՞րբ գլխատառ, ե՞րբ նոր տող, և ապա թէ ըստ այնմ անթերի գրել: Համեմատել, ստուգել:

18.

### «Ա Ի Ա Գ Մ Կ Կ Ւ Ի Կ»

ԲԱՆԱՀՈՐ.

Մկան համար ասում են.

Հողէ լուլա,  
Մաէ գիւլլա,—

որովհետեւ հողի գոյն ունի և գիւլլի պէս արագ փազում է (գնդակի պէս սրանում է): Նորա մասին շատ զուարձալի պատմութիւններ կան. ահա այն պատմութիւններից մէկը կարդացէք:

Ընթերթանութիւն.

Աւագ մկնիկ խա/թունը լեչաքը քաշեց գլխին և գնաց: Ճանա/պարհին ով պատահեց, հարցըց. «Խէր ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտա/պով նւր ես գնում»: Նա ամէնին էլ պատասխանեց. «Գնում եմ մարդ ճարելու»: Ամէնքն էլ ասացին. «Գնա, Աստուած յաջողի»:

Գնաց, գնաց, վերջապէս թագաւորի աքլարը թուաւ եկաւ առաջը և ասաց. «Խէր

ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով նւր ես գնում»:

—Խէր բարին վրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:

«Արի, ինձ մո»:

—Ինձ ինչով կը պահես:

«Կտուցովս»:

Մէկմէկու հաւանեցին, գնացին եօթնօր, եօթը գիշեր հարսանիք արին, պսակուեցն:

Հարսանիքը պրծան. աքլարը գնաց քճէճ անելով դադում ճարելու, աւագ մկնիկն էլ մտաւ թոնիր, որ վառի: Թոնիրի կրակը կըպաւ, աւագ մկնիկը մնաց թոնիրի մէջ, եղաւ ճըժտիկ-վրժտիկ:

Աքլարը երեկոյեան տուն եկաւ, տեսաւ որ աւագ մկնիկն ընկել է թոնիրը, եղել է ճըժտիկ-վրժտիկ: Գնաց կատարը կտրեց, մոխիր ցանեց գլխին ու նստեց:

Կաչաղակն եկաւ, տեսաւ, ասաց. «Աքլարիկ, դու ինչու ես կատարկտրիկ, մոխրաթաթախ»:

—Օ՛հ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաթաթախ. աւագ մկնիկն ընկաւ թոնիր, եղաւ ճըժտիկ-վրժտիկ:

Կաչաղակի փետուրները թափվեցան. գնաց նստեց ծառի վրէն:

Ծառիկն ասաց. «Կաչաղակիկ, դու ինչու ես թևաթափիկ»:

—Օ՛հ, կաչաղակիկ թևաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաթաթախ. աւագ

մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճշժափիկ-վրժտիկ:

Ծառը կոտրվեցաւ, բնկաւ քարի վրա:  
Քարն ասաց. «Ծառիկ, դու ինչո՞ւ ես  
ձղա/կոտոր»:

— Օ՛հ, ծառիկ ձղակոտոր, կաչաղակիկ  
թևաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխ-  
րաթաթախ. աւագ մկնիկն ընկել է թոնիր,  
եղել է ճշժափիկ-վրժտիկ:

Քարը գլորվեց, գնաց ծովը:  
Ծովն ասաց. «Քարիկ, դու ինչո՞ւ ես  
զլոր-մլոր»:

— Օ՛հ, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ձղա-  
կոտոր, կաչաղակիկ թևաթափիկ, աքլարիկ  
կատարկտրիկ, մոխրաթաթախ. աւագ մըկ-  
նիկն ընկել է թոնիր, եղել է ճշժափիկ-վրժ-

— Ծովն էլ մէկէնմէկ բրորաւ:  
Հովիւր նորա դէմ ելաւ և ասաց. «Ծա-  
փիկ, դու ինչո՞ւ ես բրոր-մլոր»:

— Օ՛հ, ծովիկ բրոր-մլոր, քարիկ գլոր-  
մլոր, ծառիկ ձղակոտոր, կաչաղակիկ թևա-  
թափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրա-  
թաթախ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, ե-  
ղել է ճրժափիկ-վրժտիկ:

Հովիւն այս որ լսեց, ոչխարներն ան-  
տէր թողեց, սուզ անելով գնաց: Մաքին  
\*մկնալով ետևն ընկաւ, մխիթարեց, թէ  
«դարդ մի արա», դարձրեց բերեց, եօթն  
անգամ պտաեց ոչխարների բոլորը և ասաց.

«Աւագ մկան կողի վրա,  
աւագ մկան կողի վրա,  
աւագ մկան կողի վրա»,

այսինքն, թէ «դուք ողջ լինէք, թող կատուն  
դարդ անէ»:

ԳՐԱԿՈՒՐ.

Խաթունը գնաց էրիկ ուզելու:

Բախտը բերաւ, լաւ մարդ գտաւ:

Մարդը դադում էր, կինը կառավարում էր:

Յանկարծ խաթունը ճրժափիկ-վրժտիկ եղաւ:  
Արեգակը սեացաւ, ամէնքը սգուորեցան: Էլ ով  
մնաց, որ չմղկտաց: Մաքին մըկըկաց, թաղեց  
մկան, մեր աւագ մկան:

Էն հանաքին ինչ ասեմ, որ կէսը դորթ չէ:  
Մուկը ծակը չէր մտնում, ցախ աւելն էլ պոչի-  
ցը կապեցին: Կատուի խըռխըռալը մկան հոգե-  
հանգիստ է:

## 19.

### «ԱՅԲՈՒԲԵՆԲ»

ԲԱՆԱԿՈՒՐ.

Մենք սովորել ենք զրել և կարգալ մեր բո-  
լոր տառերը: Նոցանից աւելի հեշտ են հնչվում  
ձայնատոր տառերը, որք են՝

ա ե է ը ի ու ո կամ օ  
իսկ մնացածները, սաղաձայն տառերը, տոանց  
ձայնաւորի օգնութեան չեն հնչվում, զոր օր.  
ընկը բառերի մէջ մենք հնչել ենք բա (բան),  
բէ (բեր), բը (բըշտիկ), բի (բիծ), բու (բու),  
բօ (բողկ), բայց երբէք առանց ձայնաւորի չենք

հնչել որովհետև չի հնչվի, իսկ որովհետև բոլոր տառերը թուով շատ են, իւրաքանչիւրը մի մի անուն է ստացել, որպէս զի միւսներից հընար լինի զանազանելու, մէկը կոչվում է այր, միւսը բեն և այն. դուք այդ անուններն ինձանից շատ անգամ էք լսել, և դուք էլ արդէն մի և նոյն կերպով անուանել կարող էք: Դուք միայն մի բան չգիտէք—այդ անունների կարգը: Տեսնո՞ւմ էք այս գիրքը, սա բառարան է, Մեր բոլոր բառերը սորա մէջ ժողոված կան, բայց մէջը ինչպէս գտնենք ուզած բառը: Սորա մէջ կայ և ես կարող եմ գտնել «առաւօտ», «մեղը», «կաչաղակ», «աւագ», «մկնիկ», իսկ դուք դըտնել չէք կարողանայ, որովհետև տառերի կարգը չգիտէք... Ուրեմն սովորենք այլբուրենի կարգը, որ կարողանանք բառարանների պէս գրքեր դորձածել:

Այսօր եռ ձեզ կը սովորեցնեմ միայն առաջին 10 տառերի կարգը, միւսների կարգը՝ ուրիշ անգամ: Ահա սկզբի տասը տասը գրում եմ:

ա թ թ թ ե թ է թ թ թ  
այր բեն գիր դա և զա է ըթ թո ժէ

Հիմի ես ձեզ կը թելազրեմ, թէ ինչպէս մի գիրեխայ ուսումնարանում դժուարանում էր «այլբուրենը» սովորել, այդ պատճառով անգութ վարժապետից ծեծ էլ էր ուսում, մինչև որ մի հնար գտաւ անունները մտքում պահելու: Այդ հնարը խենդ ու խելառ խօսքեր էին, կամ դժի

բանաստեղծութիւնը: Բայց առաջուց ո՞հ քանի բառեր հասկացնեմ ձեզ—դմիեմ, ջոկին, հազիր, եսիր, սախատ, զուզը, ովմի՛:

ԳՐԱԿԱՐ.

Գիժ տղի բանաստեղծութիւնը լսեցէք.  
Այբ, Բեն—գլխիդ դմբեմ:  
Գիմ, Դա—ջոխին հազիր ա:  
Եշ, Զա—կաց ու հազա:  
Է, Եթ—խաղս մնաց եղ:  
Թո, Ժէ—մէկ բանի չաժէ:  
Ինի, Լիւն—իծանս եկան տուն:  
Խէ, Ծա—կարգացողն էծ ա:  
Կեն, Հո—եսիր չբմ հօ:  
Զա, Ղատ—մնացել եմ սախատ:  
Ճէ, Մէն—ամէն, քոռանայ ով ձեռք չի վերց-նի մեզմէն:  
Յի, Նու, Շա, Ո, Զա, Պէ, Ջէ, Ռա—սոված մեռայ:  
Սե, Վև, Տիւն, Բէ—ծանը է:  
Յո, Հիւն, Փիւր, Քէ—իշի քուրք է:  
Օ, Ֆէ—ովկէն, գլուխս տոաքեցաւ:  
Խաչ. Արովեան.

Այժմ կարգանք, թէ ինչպէս դայլը ուսում է առել:  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.  
Եկան, գայլի ձագը բռնեցին ու տարան,

գիրքն առաջ դրին, որ կարդայ, ուսում  
առնել:

Ասացին. «Ասա այլ»: Ասաց. «Այծ, փո-  
րիս դեղ է»:

Ասացին. «Ասա ըեն»: Ասաց. «Բաղ, ե-  
րանի տեղն իմանամ, բռնեմ բաղը»:

Ասացին. «Ասա զիմ»: Ասաց. «Դառը,  
լաւ գիտեմ դրա համը»:

Ասացին. «Ասա դա»: Ասաց. «Դմակ, հա  
անուշ դմակ»:

Ասացին. «Ասա եշ»: Ասաց. «Ես եղ, ե-  
զր մի քիչ զօրեղ է, բայց նրա միսն էլ հա-  
մեղ է»:

Ասացին. «Ասա զա»: Ասաց. «Զարնեմ,  
զենեմ, մորթեմ, քերթեմ, լափեմ»:

Ասացին. «Ասա է»: Ասաց. «Էշն էլ գէշ  
չէ, էն էլ կուտենք»:

Ասացին. «Ասա ըթ»: Ասաց. «Ը, ըն-  
տանի կենդանի, ամէնն է պիտանի. ուզտ,  
ձի, ջորի, հորթ ու կովը թող ճանապարհը  
մոլորի, իմ ճանկն ընկնի»:

Ասացին. «Ասա թո»: Ասաց. «Թօ-թօ,  
մոռացել եմ ոչխարը, թող մի պատահի,  
տես ոնց կը գզզկեմ»:

Հէնց որ ասացին. «Ասա ժէ», տեղից  
վեր թռաւ, թէ «ժամանակ չունեմ, շուտ  
արա, հէր օրննած. հրէն ոչխարի հօտը անց-  
նում է. իմ ի՞նչ բան է այր-ժէ-ծէ-ոա, ես հօ-  
քաղցած մեռայ»:



20.

## «ԱԶԱՏ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՉ»

(Կարդացածք պատմութիւն եւ կամեւը քրել տալ)

ՀԱ ԴԱ-ԴԱ-Ն

Ճոճը ծառեն զցած է,  
Ռեխէս մէջը քնած է,  
Վարդն երեսին փռած է,  
Ծուծուկ, ծուծուկ քրտնած է:

Դիմաց մորի ես, ըեխա,  
Ծէկ շորի ես, ըեխա,  
Հօրը մուշտակ ես, ըեխա,  
Մօրը շուշտակ ես, ըեխա:

Բաղ ու բախչա ես, ըեխա,  
Ծալած բոխչա ես, ըեխա  
Աստծու տունը շէն կենայ.  
Հա դան դանի, դանդանի:

Քամարիանց Ա.

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԽՊԵՐԸ

Արի գնանք, եզր ջան,  
Համ վար անենք, համ էլ ցան,  
Աշխատանքի օրերը,  
Հրէս եկան, մօտեցան:

//

Գութանը դու կը քաշես,  
Մաճկալդ էլ կրլեմ ես:  
Էն զլիիցըն էս զյուի  
Էս փեշակն է պահել մեզ:

Յ. Աղաբար.

Մ Ա Ս Ա Ն Ը  
(այժ.)

Կըտի-կըտի Մաստանը,  
Կըտիկը մտաւ բոստանը:  
Ոտով մարգը տրորեց,  
Գլխով հորը փորփորեց.  
Ծուշ-ծուշի վեր ելաւ,  
Իր պոչի հետ խաղ արաւ:  
Բոստանչն էլ դուրս թռաւ,  
Չար այծիկին ձեռք առաւ.  
Տրւեց, տրւեց, տուր-տուրեց,  
Զանը վրէն քրրքորեց.  
Քամուն տրւեց մազերը,  
Տեղից հանեց պոզերը,  
Հանած պոզերի տեղը  
Լոցրեց աղ ու տաքեղը:  
Քովիկ դարձաւ Մաստանը,  
Էլ չէր մտնում բոստանը:

Ար. Խնկոյեան.

Մ Ի Տ Ը

Ծընկը, մընկը,  
Փուշիկ տուի, լօշիկ առայ,

Լօշիկ տուի, գառնիկ առայ,  
Գառնիկ տուի, հարսիկ առայ,  
Հարսիկ տուի, սազիկ առայ,  
Սազիկ առայ, աշուզ գառայ,  
Ծընկը, մընկը,  
Ծիւ, ծիւ:

Եռիկ. Թումանեան.

Բ Ա Ռ Ա Խ Ա Դ

Պօղոմն ու Պետրոսը բառախաղի էին տալիս: Պօղոսը վարժված էր, իսկ Պետրոսը նոր էր սովորում:  
Ահա թէ ինչպէս էին խաղում:  
Պօղոս. Պետրոս, ասա մատնը:  
Պետրոս. Տունը:  
—Քեզ կծի զունը: Ասա զունը:  
—Դուռը:  
—Ընկնիս ջուրը: Ասա պաս:  
—Պաս:  
—Ուտես թանէ սպաս:  
—Էլ չեմ ասում: Կմի ես կը հարցնեմ  
Քեզ:  
—Լաւ, հարցրու:  
—Ասա ծիս:  
—Ծիս:  
—Ուտես մախոխ:  
—Այդ չեղաւ, Պետրոս: Ես ասում եմ  
ծիս, դու ասում ես մախոխ. Ինչպէս կարելի է. տեսնում ես նման չես:

Դ. Աղայեան.

## ՊՍՏԻԿՆ ՈՒ ԼԱՏԻԿՆ

Դաշտի մուկը հսկայ ու չաղ,  
Ազին երկար, ինքը դօչաղ,  
Մօտենալով մի օր մի տան,  
Տեսաւ պստիկ վտիտ մըկան.  
«Պահ, քո տունը Աստուած շինի,  
Էդպէս պստիկ մուկ կը լինի...»  
Էդքան նիհար, հալից ընկած  
Աշխարհումս դեռ չի եղած,  
Հարուսա տան մէջ տաք ամբարում  
Թագաւորի կեանք ես վարում.  
Ուսում ես միշտ կարագ ու եղ,  
Կրծում շաքար ու նուշ համեղ:  
Իսկ ես խնապան, ցուրտ գաշտերում  
Հանգիւհազ եմ ապրուսն ճարում.  
Բայց տես, քեզնից մեծ եմ, հակայ,  
Խնձուս լիստիկ՝ էլ մուկ չկայ...»—  
«Մի պարծենար, իմ աչքի լիս,  
Մէկ նայիր, թէ հի է պալիս»:  
Նայեց էն կողմ դաշտի մուկը,  
Տեսաւ կատուին—ցամքեց թուքը:  
Պստիկ մուկը իսկոն փախաւ,  
Եր նեղ բնում շուտ թագ կացաւ.  
Շատ աշխատեց լիստիկ մուկն էլ,  
Բայց չկարաց ծակը մտնել.  
Կատուն վազնց կաղմիկ-կաղմիկ,  
Բոնեց դաշտի մըկան չաղմիկ:  
«Բաջի, կանչնց տան մըկնիկը.  
Պստիկն է լաւ, թէ լիստիկը...»

Օսր. Թումանյան.

## ՅԱԻԵԼՈՒԱԾՆԵՐ

## ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱԿԱՆ

(«Արարագից»).

Մեզանում տակաւին պարզ չեն պատկերացնում մի առ մի այն բոլոր հմտութիւնները, որոնք գրագիտութեան ուսուցման խնական զասակ պէտք է դառնան: Գրագիտութեան որ հմտութիւններով վերջնական մրգիւնք է երևում—շատերի համար մութ է մուս այս ինսդիրը, ուստի նոքա՝ փոխանակ ամիսների՝ ծիզ տարիներ են գործ դնում վարժ գրել-կարդալ տալու համար, այն ևս ոչ միշա յաջողութեամբ: Այս ուշրեմն, ուսուցիչը գիտակցարար պէտք է ըմբռնէ մայրենի լեզուի այն հմտութիւնները, որոնք ուսման առաջին ամիսներում, կամ գէթ առաջին տարուայ ընթացքում, աշակերտների կատարեալ արուեստ պէտք է զառնան, և որոնք այսուհետեւ հաստատուն հիմք պէտք է կազմեն ուսումը անսայթաք և առանց ընդմիջումների առաջ տանելու համար: Ահա տալիս ենք այն հմտութիւնների ամփոփ պատկերը:

### Ա. ԲԱՆԱՀՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

1. Աշակերտը վարժութիւն է ստանում հասկանալ կապակցեալ խօսքը և անձամբ ևս արտայայտել նոյնը բանաւոր լեզունվ:

2. Նա վարժվում է յօդաւոր, շեշտեալ, շնորհալի աղողակութեամբ բարձրածայն խօսել:

3. Նա կարող է յօդուածոյ խօսքը լուծել նախագասութիւնների, նախադասութիւնները բառերի, բառերը վանկերի, վանկերը հնչիւնների:

4. Նա վանկի մէջ որոշում է ձայնաւորը (երկար ձայնը), նախադաս և վերջադաս բաղաձայները:

5. Նա որոշում է ը կիսաձայնը միւսներից:

6. Նորա ականջը և բերանը վարժված է նմանաշայն հնչիւնների զանազանութիւնները իրարից որոշելու (նուրբ, միջին, թաւ):

7. Նա որոշում է զլինաւոր վանկը երկրորդականներից (մասնիկներից, աճանցներից, հոլովական և խոնարհման յանգերից) և գիտէ թէ բառակազմութեան դէպքերում, շեշտը փոխադրվելով՝ մէծ մասամբ վերջին վանկի մրա է հանդչում:

8. Նա գիտէ որ «կու գայց, գնում է», կասէծ անբաժան և արտասանվում իսկ շեշտը «գնում է», «մարդը» բառերի մէջ վերջնները և ուրեմն չպէտք է ասել—«գնում է», «մարդը»:

9. Նա որոշում է բառակազմութեան վանկերը արտասանութեան վանկերից (ներքին ազդմնութիւնը և ոչ թէ այլ անուններով). Նա որոշում է բառի արմատը նախադաս և վերջադաս մասնիկներից, զոր օր. քարտ, համարեանք) բառը ըստ հարկին կը լուծէ և այսպէս՝ ար-հա-մար-հանք, և այսպէս՝ արհ-ա-մարհ-անք, որով միջու այն գիտակցութեամբ անսխալ կառաջնորդվի. Թէ նոյն իսկ դժուարագոյն և ամենագրադարդ բառերը կամ մըված են փոքրագոյն և լաւ յայտնի անդամներից կամ օրգաններից:

10. Նա գիտէ որոշում է փոփոխող մասանց բանի հանգամանքները՝ եղակի և յոգնակի, գեմք, ժամանակ, եղանակ, ներդորժական, և կրառութական ձևեր:

11. Վերլուծական հարցմանց վարժութիւններով (հոլովական, հարցումներով, ապա և որպիսութեան, տեղական, ժամանակական և այլ պարագաները հնտագո-

տելով) և առաւելապէս ներքին զգացումից առաջնորդվելով սովորել է իմանալ նախադասութեան, մասանց փոխագարձ յարաբերութիւնները:

12. Նա որոշում է պատմական (հաստատական և ժխտական), հրամայական (ողոքական) և հարցական խօսքը յօդուածոյ բանի մէջ. Գիտէ, որ նախադասութեան մէջ գրայդ, այլը երբեմն զօրութեամբ է իմացվում:

### Բ. ԳԻՐԻԺԹԻՒՅ:

1. Նա կարող է իւրաքանչիւր զառ ըստ հնչման գրել, բայց ի հարկէ ինչպէս որ լեզուի սովորութիւն է (մասնաւանդ տարակուսելի բաղաձայները). Այսպէս ևս գրի է առնում նաև փորիկ նախադասութիւնները իւր գիտեցած անշեղ կանոններով, բայց ոչ բոլորովին առանց օգնութեան (ուսուցչի կողմից):

2. Նորան ծանօթ են տրոնութեան նշանները՝ վերջակէտ, սուրակէտ, բութ, միջակէտ, հարցական, երջակը, շեշտ, չակերտ, և բարականաչափ գիտէ գոցագործածութիւնը:

3. Նա գիտէ թէ խօսքի սկզբին և ամենայն վերջակէտից յետու պէտք է գլխատառ նշանակի, թէ կանմի բանի բառեր, որոնք միշտ այդպիսի գրով են գրել վում:

4. Նա պրոյէն սկսել է բառակազմութեան կանոնի համեմատ գրել և մի գաղափառ ունի կորուսման և փոփոխման մասին. Կթէ զոր օր. գիրում է ասթեմք, այսուհետեւ հետեւ գիտէ, որ տէրը այլ ես ոչ տառով չի գրվէ. Կթէ գրել է հաւարար, այսուհետեւ անօփոթ պիտի գրէ անէր։ և ոչ թէ ձներ։ կամ եթէ գրել է ատիւրը, նորան չի շփոթի ու հնչիւնի կորուսմը և համարձակ կը պէտի տիւրել։

5. Նա գիտէ՛ թէ արտասանած «որ նոր» պէտք է գրվի «որն որ» և թէ երբեմն անբաժան արտասանածը պէտք է գրել բաժանված (կու գայ, գնում է, կ'ասէ):

6. Նա գիտէ՛, թէ «ը» կիսաձայնը գրելիս երբեմն չի նշանակվում, և թէ «յ», «ո», և «ւ» նշանագրերը դանազան գործածութիւն ունին: Այսպիսի տարրեր գրութեանց համար մի մի յարացոյց բառեր մաքի մէջ տպաւրած ունի, որոնց յիշողութեամբ առաջնորդվում է, երբ որ միասեռ բառեր է գրում: Նա զօր օր՝ ասում է, թէ «յորդոր» բառը գրվում է որպէս «Յիսուս», իսկ «հաստ» չի գրվում որպէս «Յիսուս»:

7. Նա յուշատետրի մէջ հետզհետէ հաւաքում է «օ», «է», «յ», «ւ», «ո» բառերը (բայց ոչ «ո», «հ», «հ», «վ», «ր» բառերը):

#### Գ. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ.

1. Արդէն գրութեան վարժութեանց ժամանակ նա սովորութիւն է արել իւր ձեռքով ամէն մի գրածը անմիջապէս կարդալ, և այդպէս կարդալով նկատել ընթերցանութեան կանոնները:

2. Նա գիտէ՛, թէ ինչպէս պէտք է կազմէ վանկը, գտնելով նախ ձայնաւորը, ապա և բաղաձայները (աւելի լաւ՝ եթէ կարողանայ ամրող վանկը անմիջապէս կարդալ, առանց դիմելու կազմութեան հատ հատ մանրամասնութիւններին): Գիտէ՛ թէ նախընթաց բառի վերջին բաղաձայնը արտասանվում է հետեւել բառի սկզբնական ձայնաւորի հետ ի միասին (որն որ), թէ երբեմն բաժանվածը միասին պէտք է արտասանվի (կու գայ, գնում է, կ'ասէ), թէ շեշտը երբեմն լսվում է վերջընթեր վանկի վրա (զրում է, մարդը). Գիտէ՛ թէ «ը» կիսաձայնը շատ անգամ զօրութեամբ պէտք է իմացվի և թէ «յ», «հ», «ո», «ւ», և այլնայլ երկրարթառները բանի տեսակ են կարդացվում, ուստի աշխատում է

ձշուութեամբ կարդալ: Նա ճանաչում է նմանապէս տարակուսելի բաղաձայները:

3. Նա սովորութիւն է արել բարձրաձայն կարդալ միայն այն, ինչ որ կանխաւ լուս պատրաստելով է գրել: Գիտէ արուութեան նշանների զօրութիւնը և լսու այնմ ելեկջներ է տալիս իւր արտասանութեան:

4. Նա նորանով է արագացնում լուս պատրաստութիւնը, որ աւելի մտադրութեամբ քննում է արմատական վանկը, իսկ մասնիկներն արդէն հարկնաեցի հայեցքով ճանաչում և շուտ կարդում է: Նա զոր օր «անիշխանութիւն» բառը փոխանակ ծայրէիծայր հաւաքարապէս մանր գիտելու, բաւական կը համարէ մտադրութեամբ քննել «իշխան» մասը, իսկ «ան», «ական» և «ութիւն» բաղադրութիւնները արդէն յայտնի են իւրան իւր նախկին վարժութիւններից, հետեւ ապէս գիւրութեամբ կը ճանաչէ և չի գժուարանայ անմիջապէս կարդալ:

## ԳՐԱԴԻՏՈՒԹԵՍՆ ԴԵՍԵՐՄԱԿԻԹԵՍՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(«Արարատից» համառուսած).

Գրագիտութիւն ասելով՝ սովորաբար հասկանում են կարդալ-գրել, իսկ ոմանք աւելի՝ ճշտելով՝ ասում են գրել-կարդալ, բայց մենք՝ այդքան էլ քաւական չհամարելով՝ պնդում ենք, որ գրագիտութիւնը՝ պէտք է սովերեցնէ խօսել-գրել-կարդալ, Ուրեմն նախ՝ բառ նաև վարժութիւն, ապա նորա վերաց հիմնած գրաւոր վարժութիւն, վերջապէս այդ երկուսից բավանձընթերցանութիւն։ Այս կարգով էլ այդ վարժութիւնները ստորև կը նկարագրենք. իսկ առ այժմ համառոտակի ցոյց կու տանք նոցա երկու նախալսաւուանութիւններոյ:

Ամենայն ուսում, շատ կամ քիչ բացառութեամբ, բարդ բնութիւն ունի. Դասատուի զլխաւոր հմտութիւնը այն բանում պէտք է երեալ, որ նա աշխատէ ճիշտ ըմբռնել ուսուցանելիքի բարդութիւնը և չփորձէ մի անզամից աւանդել յախուռն կերպով ամբողջը, մինչև որ ամբողջութեան մասերը մէկը միասից յետոյ ջոկ ջոկ պարզօրէն չըուսաբանէ։ Այդէն Պատունն ասել է. Շիրացանչիւր անգամ—միայն մի բան։ Մեր նախալսաւութիւններն այդ խորհուրդն ունին:

Մեզանում սովորութիւն է դառել գրագիտութեան հնտ ի միասին և միատեղ սկսել տառել ծնացնելլի։ Բայց այստեղ միացած է հանդիսանում երկու գործ։ Այլ է այն գործը, թէ ինչ տառ պէտք է գրվի, երբ որ արտասանում ենք բառի մէջ սէ, թէ, այր, և այլ է միւս գործը, երբ որ պահանջվում է այդ տառերի ձեւգրութիւնը կամ գծագրութիւնը։ Հետևապէս, որ պէս զի շփոթութիւններ առաջ չգան և զլխաւոր գործը

շդանդաղանայ։ պէտք է տառեր ձեւացներոն արուեստը փոքր ինչ առաջ ձգել, ինչպէս որ մենք արել ենք։ Դանք երկրորդ նախալսաւութեան։ Որպէս զի գրագիտութիւնը կանոնաւոր կերպով և անսայթաք առաջ գնայ, մանուկը շատ շուտ պէտք է ըմբռնէ եղութիւն յօդաբաշխութիւնը, այսինքն թէ իւր խօսած, եւ զուն յօդեր ունի, կատարեալ չենքի կազմութիւն, ունի ուրունք էն նախալսաւութիւնն, բառ, վանկ, ճնշիւն։ Այս յօդերը հասկացնելու համար, հարկաւ պէտք է գործածել սղանագրի կամ տառեր եւ մեր ուսուցիչները հէնց սկզբից դիմում էն բարդ գրելի գործածութեան, որով դարձեալ աղխատութիւնը կրկնապատկում է մի կողմից յօդաբաշխութիւն, միւս կողմից բարդ ձեւագրութիւն։ Ուստի մենք նախալսաւութիւնները, բառերը, համակերը, ճնշիւնները ձեւացնելու համար՝ առ ժամանակները ածում են ածում գործեալ աղխատութիւնը, կրկնապատկում է մի կողմից յօդաբաշխութիւն, միւս կողմից բարդ ձեւագրութիւնն, Ուստի մենք նախալսաւութիւնները, բառերը, համակերը, ճնշիւնները ձեւացնելու համար՝ առ ժամանակները ածում գործեալ ածում գործեալ աշեղները եւ կէտեր։

Մենք այս նախալսաւութեանները զատել ենք ըստն, գրագիտութեան ուսումնեցին եւ ուրեմն եթէ ուսուցիչը աւելորդ գտնէ նախալսաւութեաննը, կարող է անմիջապէս գիխաւոր գործին զիմել, եթէ յոյ ունի իւր համարականներուն է, այլ սերտ միութիւն կազմող ամրողներուն, այսինքն մի կենտարեալ մանրապատում, և այս գեղանի կենդանի կերպով ձևացած, որ իւր բովանդակութեամբ գրաւէ մանկան ուշակրութիւնը, մարդաւանդ քաջակերէ նորան իւր բերանը բանալու և լսածք վերստին պատմելու։ Պէտք է միշտ իւնի պատմելու, ոյ լեզուն սովոր բառեր չպէտք է առվարեցնէ, այլ մտարել տառ և մտարել ծնանէ, նիւթը պէտք է առաջ անձանարին և ծնողութեան մտարել մարդու զունութիւնը պէտք է գրվի, ապա զարդարացման արժատներից է ծագում։ Ըստութիւնը պէտք է կատարվի պազային վաեմ գրականութեան ամբողջութիւնից, և ոչ թէ այս կամ այն կանութեան ամբողջութիւնից, որ միշտ միակողմանի է և երանհատ բանաստեղծից, որ միշտ միակողմանի է և

ԲԱՆԱՄՈՒՄ վարժութիւն։ Այս վարժութիւննց նիւթը չպէտք է լինի ճատ ու կտոր, անկատ, նախալսաւութիւնների կուտակութիւն, ինչպէս որ սովորական կազմող այրենարաններուն է, այլ սերտ միութիւն կազմող ամրողներուն, այսինքն մի կենդանի կերպով ձևացած, որ իւր բովանդակութեամբ գրաւէ մանկան ուշակրութիւնը, մարդաւանդ քաջակերէ նորան իւր բերանը բանալու և լսածք վերստին պատմելու։ Պէտք է միշտ իւնի պատմելու, ոյ լեզուն սովոր բառեր չպէտք է առվարեցնէ, այլ մտարել տառ և մտարել ծնանէ, նիւթը պէտք է առաջ անձանարին և ծնողութեան մտարել մարդու զունութիւնը պէտք է գրվի, ապա զարդարացման արժատներից է ծագում։ Ըստութիւնը պէտք է կատարվի պազային վաեմ գրականութեան ամբողջութիւնից, և ոչ թէ այս կամ այն կանութեան ամբողջութիւնից, որ միշտ միակողմանի է և երանհատ բանաստեղծից, որ միշտ միակողմանի է և

թէք ամբողջ ազգի հոգին լրիւ ներկայացնել չի. կարող:

Թէպէտի նիւթի ընարութեան ժամանակ հաւատարիմ պէտք է մնալ մանկավարժական այն սկզբունքին, որ ասում է, թէ «մերձաւորից հեռաւորին», սակայն նախ այն պէտք է քաջ կշռել, թէ մանկան սիրտը ի՞նչ է համարում իւր համար մերձաւոր, և ի՞նչ հեռաւոր: Երկինք, արեգակ, աստղեր—ահա նորա մերձաւորը. իսկ եթէ ուղենանք հէնց առաջին օրուանից նորա խեթք սրել՝ զննել տալով սենեազը, աթուները, վառարանը, կատուի ոտքերի որքանութիւնը, այսինքն նորա մտադրութիւնը դարձնել տալով ամենահասարակ և առօրեայ հանգամանքների վերա, անշուշտ այդ հարաներով չեն արձակվի նորա կաշկանդված լեզուի կապերը: Ուսումնաբանում ամենայն բան սովորեցնել ոչ հարաւոր և ոչ կարեոր է. մի մասը միշտ պէտք է թողնել որ մանուկը ինքն իւր նախաձեռնութեամբ ստանայ տան, փողոցի, հասարակութեան մէջ:

Լեզուի անմիջական տպաւորութեան առաջին հետևանքն այն պէտք է լինի, որ նա սովորեցնէ լուսել. լսածը անմիջապէս այնպէս պէտք է ազգէ, որ լեզուն շարժվի, վարժապետի պատմածը աշակերտի լեզուն պէտք է բանայ: Բայց այդ ժամանակ ուսուցիչը պէտք է հարկ եղած չափը պահպանէ—ոչ կրտակէ, և ոչ բերան բանալը զանայ: Մի անկապ և անկենդան նախադասութիւն երբէք ոգի չի տայ աշակերտին, որ այսունետեւ նա էլ ձգոէ մի և նոյնը իւր բերանով կրկնել: Իսկ եթէ մանուկներին պատմվի այնպիսի պատմութիւններ, որ նոցա ուշքը լարեն, միտքը գրաւեն, այն ևս եթէ պատմվի մի քանի անգամ—իցէ թէ այն ժամանակ արձակվին նոցա լեզուի կապերը:

Ուսուցչի հոգաը այն պէտք է լինի, որ աշակերտն արդէն այս աստիճանում հետզետէ սովորէ և վարժվի խօսել կատով, խօսրի անլամները տրունել շնորհական կերպով, պահպանելով քերականական նշտութիւն, մաքոր և վայելով արտասանութիւն: Աշակերտը ուսուցչից սովորում է փոքրիկ ոտանաւորներ, առակաւոր ասացուածներ, մանրապատումներ, նախ մաս առ մաս, ապա և ամբողջութեամբ, բայց ոչ թէ մի մի քառ եւ մի մի նախադասութիւն լսերով և ապա անմուար թութակելով, այլ իմաստի ամբողջութեան ազ-

դումը ստանալով: Հատ հատ աշակերտի խօսածներին պէտք է յաջորդէ խմբովին արտասանութիւնը: Բայց որպէս զի իմաստալից խօսուածքի ճանապարհը բացվի, որպէս զի խօսածը մի և նոյն ժամանակ ուղիղ արտասանութեամբ և որոշ հնչմամբ կատարվի, պէտք է հէնց բանաւոր վարժութիւններում լեզուի ծեւերի հապկացումը յաջորդնել: իսկ այս նպատակով պէտք է որ մի և նոյն նիւթը կրկնեն մատակարարվի, այսինքն յատուկ, առանձին և ջոկ վարժութիւններով, ուրիշն բովանդակութիւնն ու արտայայտութեան ձեռ՝ իւրաքանչիւրը զատ վարժութիւններով պէտք է աւանդվի: Մանկան միտքը միշտ արթուն պահելու համար, պէտք է խուսափելով խուսափել տաղառուկ, միակերպ, կցկը տուր խօսքերից, և անդադար լսեցնել միայն կատարեալ արտասանութիւն—յօդաբաշխ և վայելուչ տրոհութեամբ:

Նախ քան զրութեան վարժութիւններին անցնելու, դարձեալ յիշեցնում ենք, որ աշակերտը լաւ պէտք է ըմբռնէ լեզուի յօդաբաշխութիւնը, մանաւանդ առ այժմ աչքի առաջ պէտք է ունենալ լսած և խօսած բառերը: Մեր նպատակն է աշակերտին զգացնել և զանազաննել տալ ոյն հնչիւնները, որոնցից որ կազմված է լսած ու արտասանած բառը. և այս պիտի լենի այն ալրմատար, որ տեղից որ պէտք է ծիր գրութեան վարժութիւնը:

Հնչիւնների յօդաբաշխութեան համար երկու ճանապարհ կայ՝ մերենական եղանակ և լեզուի հնչականացնեցն կազմն թիվնը ցուցանող եղանակ: Եթէ մանուկը ամբողջ բառը նկատէ որպէս հնչիւնների անբարեկարգ կոյտ, նա «կենդանութիւն» բառը կը փորձէ լուծել շարունակ գլխից մինչև տուած՝ և կը կարգացէ և այլն, մինչև որ վարժապետի օգնութեամբ ուղղէ և ծշտէ իւր սխաները: Այս կը լինի մերենական եղանակ, այսպէս է եղել այրժէ-ճէ-ռայի եղանակը, այսպէս է և այսօր հնչական եղանակը: Այդպիսի խառնաշփոթութիւններից գերծ մասնակի լու համար, պէտք է գտնել տալ բառի յօդերը, բառի վանկիրը, որոնց մէջ օրգանական արմատ են կազմում ձայնաւոլները: «կենդանութիւն» բառի հնչիւնները

զգալի կացուցանելու և զանազանելու համար՝ նախ շեշտում ենք ծայնաւորները (ե-ա-ու-իւ), ապա ուշադրութիւն ենք դարձնում իւրաքանչեւր յօդի նախաղաս և վերջաղաս բաղաձայների վրա և առանում ենք չեղովանկ (կեն-դանու-թիւն): Ուրեմն մանուկը՝ զեկը ձեռքն՝ զգուշանում է խոռոչերից: Անա այս է երկրորդ տեսակի յօդաբաշխութիւնը կամ օրդանական լուծումը: Այսպէս պէտք է վարդել այն պատճառով, որ ինչպէս զիտենք՝ բայց ոչ թէ հնչիւնների խանուրդ է, այլ յօդաւոր կազմակերպութիւն, ուր որ ձայնաւորը կենդրոն է, իսկ բաղաձայները կազմում են յօդի սահմանները: Այս տեսակի յօդաբաշխութեան մի օգուտն էլ այն է, որ բաղաձայները չեն արտասանվի բռնի կերպով անջատված կամ հակառակ իրանց բնութեան, այլ միշտ անբաժան, իրանց կազմիչ ձայնաւորի հետի միասին և հետ կցորդած: Եթէ աշակերտը զոր օր. «մուկ» բառը լուծէ, հարկ չը կայ, որ հնչիւնները զատ զատ նշանակէ և անբնական կերպով քաշքրտէ, այսինքն՝ մմմ... առանձին մոնչէ և կիկ... առանձին կտկազէ, այլ վերոգրեալ եղանակով այսպէս կը հեգէ՝ ու, մ՛ու, մնւկ, կամ ու, ուկ, մնւկ:

Հէսց որ աշակերտը վարժութիւն ստանայ լեզուի մէջ բնական յօդերը ճշորւ որոշել, նա կը հասկանայ, թէ հնչող լեզուն կարելի է տեսանելի և երեկու կացուցանել այսինքն պայմանական նշաններով զրել:

ԴԲՈՒԽԹԻՆԸ հէսց սկզբից այնպէս պէտք է աւանդի, որ մանուկը սովորէ իւր բանաւոր խօսքը զըրով դրոշմել, կիրը իրեւ խօսքի սպասաւոր նկատելով: Այսպիսի գիրը, որ յղացած միտքը ճշդիւ և անշփոթ գրի է առնում, անշուշտ լեզուի ձեռքի ծանօթութեամբ է կատարվում, հետեւապէս ուսուցիչը ոչինչ չպէտք է գրել տայ, մինչեւ որ հարկաւոր ծանօթութիւնը չի տուել:

Նախ և առաջ չմոռանանք, թէ ինչ որ աշակերտը խօսում է, այն ևս տովորում է գրել, և ինչ որ գրում է, այն ևս անմիջապէս կարդում է, հետեւապէս գրութեան վարժութիւնների ժամանակ՝ նա կազմում է իւր զրելու և կնարկալու այբբենարանը: Ապա ուրեմն հարկաւոր է, որ նորու տեսրակը միշտ մաքուր և կարգին պահպի:

Հին ժամանակներում մեր այրութենը մեծ կատարելութիւն պէտք է ունինար, այնպէս որ այն ժամա-

նակ զրութեան համար միայն մի կանոն կարող էր լինել—զրիր՝ ինչպէս որ նշում՝ ես: Իոկ ժամանակով ձայների արտասանութիւնը փոփոխութիւններ է կրել: այժմ մենք մի ձայնի համար մէկից աւելի նշաններ ունինք, կամ զանազան ձայների համար՝ մի և նոյն նշան ենք գործ գնում: Այսպէս բացվում է սխանների գուը, ուր համբակները կարող են շփոթել յ և հ—օ և ո—ե և լ, գրերը մի և նոյն ձայն նշանակելիս, կամ տարրեր ձայների համար կը պարտաւորվին մի նշան գործ գնել, զոր օր. ւ, ու, և նշանները, որոնք մերթ ձայնաւոր կամ կիսաձայն են և մերթ բաղաձայն: Նմանապէս մի քանի բաղաձայներ իրանց սեպհական նշաններով չեն գրվում, զոր օր. աղջիկ, եղբայր, մէջ, մարդ, կարգ, ուր որ դ, չ, թ, լ, զ գրերը հնչվում են որպէս լս, չ, պ, թ, թ: Ապա ուրեմն մեր այժմեան ուղղագրութիւնը լոկ միայն ուղիղ արտասանութեամբ չի առաջնորդվի, այլ արտասանութենը օգնական պէտք է համնի քերականութեամ սկզբունքը, որ աւելի աշքին նշմարելի կարող է գառնալ, քան ականջին լոելի:

Ապա լեզուն ցուցանում է այնպիսի առանձնութիւններ, որոնք աւանդութիւններ են: Մենք սիակերպ անխմտիր արտասանում ենք նուեր, նաւ, վնաս, բայց երեք զանազան նշաններ ենք գնում մի և նոյն ձայնի համար (ու, ւ, վ): Այսպիսի գէպիկը նկատմամբ, մանուկը սովորութիւն պէտք է ստանայ, նախ քան զրել անխառան տեղեկանալ ուսուցչից կամ բառարանից, թէ իւրաքանչեւր բառի աւանդական ձևը ո՞րն է:

Ապա ուրեմն, գրութեան արուեստով այսպէս հաստատ հիմք գնելու համար բարական չէ, որ աշակերտը սուր լսողութեամբ ըմբռնէ ուսուցչի արտասանածը և ինքն էլ գեղեցիկ ասովանութեամբ նմանէ նորան, բաւական չէ այն կանոնը, թէ գրիր՝ ինչպէս որ նշում ես. այլ հարկաւոր է հէսց սկզբից հասկացնել նորան և միւս երկու կանոնները՝ ա) գրիր բառակազմութեան համեմատ և բ) հաւատարիմ եղիր աւանդութեան: Այս նպատակով առաջ ոյհանցեցինք, որ բանաւոր վարժութեանց ժամանակ յարմար գէպիկը զրաւոր լեզուի ծանօթութիւններ աւանդվին, որպէս զի հաւանական սխանների առաջն առնվի:

Լեզուի գլխաւոր մասն է կազմում բառերի ծա-

նօթութիւնը, որոնց թիւը անսահման է: Անթիւ բառերի ծանօթութիւնը չի կարող գրութեան ուսման նպատակ լինել: Բայց բառերն ունին ընդհանութը ձևեր, որոնք կազմվում են յատուկ եղանակներով. ահա այդ տեղեկութիւնները պէտք է մատակարարվին: Չոր օք, մեր բառերի մէջ «ա» հնչված ձայնը գրվում է զանազան կերպով—կամ աև ձայնաւոր նշանով կամ այ երկրաբառ գրով: Ով որ այս հանդամանքը գիտէ, նա ունի ուրեմն գրաւոր լեզուի ծանօթութիւն: Բայց եթէ հարկ լինի մի անծանօթ բառ գրել, այդքան ծանօթութիւնը չի օգնի, որովհետև տակաւին չգիտենք, թէ այն երկու տեսակ գրութիւններից ո՞րը ուզիղ կը լինի առաջիկայ դէպրում: Մնում է ուրեմն մի մեծ աշխատութիւն յանձն առնել, այն է այնպիսի բառերի ահագին աղիւսակ կազմել, որոնք որ գրվում են աև ձայնաւորով. և նոցա անծայր շարքը յիշողութեան մէջ տպաւորել. նոյնպէս մի երկրորդ աղիւսակ ևս կազմել, ուր կը մտնեն այ երկբարբառով կազմած բառերը. բայց այս կը լինի անօգուտ և սիալ ընթացք: Բաւական է, եթէ սկզբում աշակերտը մի քանի ծանօթ բառերի օրինակով սովորէ աև հնչիւնի զանազան գրութիւնը, իսկ ժամանակին և ուսման շարունակութեան թողնէ. որ հետզհետէ բազմացնէ այդպիսի բառերի պաշարը: Ոչ նըւազ սիալ կը լինի և այն կարծիքը, իբր թէ յիշեալ ծանօթութիւնը ոչինչ գործնական նշանակութիւն չունի, եթէ անծանօթ բառի ուղղագրութեան տարակոյսը չի լուծում: Մինչդեռ նորա օգուտը մեծ է. այն օրուանից, երբ որ աշակերտը յիշեալ ծանօթութիւնը ստացել է, նորա մէջ արթնել է մի զգացում, մի հմտութիւն, որը որ առաջ չկար, այն է՝ այնուհետև նաև միշտ ըսկում է մտադրութեամբ զնինել և տպաւորել ամենայն պատահող աև ձայնի գրութիւնը: Նա տարակուտող է բառել, ուստի հարկաւոր դէպերում կամ ուսուցչից կամ գրքից տեղեկութիւն կառնէ, որպէս զի սիանիներից զերծ:

Այսպիսի ծանօթութիւններ կարելի է քաղել քերականութեան բոլոր մասերից, և ուղղագրութիւնը միշտ կը գիւրանայ քերականական կազմութեան, ածանցմանց և ստուգաբանութեան մտադիր լինելով: Բայց վարժութեան գլխաւոր նպատակն այն է, որ աշակերտը սովո-

րէ միշտ մտադրութեամբ գրի առնել, այսինքն կանչիւակութիւններ առնելով գրել: Քերականութեան մեծ պաշարից պէտք է ընտրել էականը, որ և ցոյց կուտանք մի երկու խորագիրներով:

Զայնական գրութիւնը (1) հարկաւ ձայնական ծանօթութիւնից պէտք է բգիսի: Զանազան բառեր հետզհետէ լուծելով յետոյ, վերջապէս յայտնի պէտք է զառնան բոլոր ձայնաւորներն ու բաղաձայները: Բայց աշակերտները բաղաձայներ պէտք է գտնեն ոչ թէ ասարօրինակ հագաներ բբչելով, մմնչելով, շնչելով կամ սուլելով, այլ որպէս բառի համապատասխան ձայնաւորներն են բին կցված նախադաս և վերջադաս հնչիւններ: Ուստի և վանկի հեգելը պէտք է սկսեն ձայնաւորից, որը վանկի կամ բառի ոգին է: Իսկ եթէ ուզենան բաղաձայնից սկսել, միշտ ձայնաւորն էլ հետո պէտք է հնչեն: առանց ձայնաւորի բաղաձայն չկայ: «Դիր» բարական ամբողջութեամբ զիլ, և ոչ թէ գգգի-իիիի-լրրը: Ուրեմն լիակատար հնչիւններ են միայն ձայնաւորները: Ութէպէտ գրութեամբ երկբարբառ՝ սակայն հնչմամբ կատարեալ ձայնաւոր է: այ, իւ, ոյ և միւսները իբրև մի ձայն պէտք է ճանաչվին, բայց երկբարբառ թէ հնչմամբ և թէ գրութեամբ: Բաղաձայներին գալով իւրաքանչիւր հնչիւն գրեթէ իւր յատուկ զիր ունի, բայց և այնպէս շատ անգամ թէ, շ... հնչածը գրվում է դի, ջ... կամ ց, պ... հնչածը՝ ա, բ...

Այսպէս հնչիւնները լուծելով՝ աշակերտն սովորում է հասկանալ աւելի միավանկ բառերի ձայնական ըսկը: բազմավանկ բառերի չկնքն էլ պէտք է լուսաշնչելու: բառանվի բառակազմութիւն (2) միջնորդութեամբ: Աշակերտը մի բառ գրելիս աւելի ուշադրութիւն պէտք է կերտը մի բառ գրելիս աւելի մասի վրա, իսկ յաձագարնէ նորա արմատական մասի վրա, իսկ յաձագարնէ նորա գործածվող անշան մասնիկները, ածանցները, խակի գործածվող անշան մասնիկներից, հոլովական և խոնախաղաս և վերջադաս վանկերը, հոլովական և փոփոխման յանգերը, վերջապէս կորուսման և փոփոխման հանգամանքները, որոնց միջնորդութեամբ որ կազմվում են բազմաթիւ նորանոր բառեր,—արդէն վարուց պէտք է յայտնի լինին նորան՝ զանազան աղիւզուց պէտք է յայտնի կամ յայտնի գարժութիւններից: զոր օրուակներից և կանոնաւոր վարժութիւններից:

«սպառ/սպուռ» կրկնաւոր բառ է, թէպէտ փոփոխմամբ, ուրեմն բաւական է գիտենալ, թէ ինչպէս է գրվում առաջին մասը (սպառ), ինքնին կը զրվի նաև մնացած մասը. «մազ/մզ/ուկ»—դարձեալ կրկնաւոր է, թէպէտ կորուսմամբ և մի յայտնի (ուկ) վերջաւորութեամբ, ուրեմն բաւական է ուշագրութիւնը կենդրոնացնել միայն առաջին (մազ) վանկի վրա. «փառ/աւոր/ութիւն»—այստեղ կան երկու յայտնի վերջաւորութիւններ (աւոր, ութիւն), ուրեմն ուղղագրութեան կողմից վիսաւոր ուսումնամիրութեան մասն է մնում «փառ» արձատական վանկը և այլն:

Քանի որ աշակերտն սկսում է առաջ գնալ զրութեան արուեստի մէջ, մի բառ միւսի հետ համաձայնեցնելով, մինչև որ նախադասութիւններ ևս կազմել է սովորում, նա գաղափար է կազմում մի քանի տեսակ բառերի վերջայանդ վանկերի փոփոխութեանց մասին: Բայց նա այդ աեղեկութիւնը պէտք է ստանայ ոչ թէ նոլուզիների և խոնարհումների (3) տախտակներից, այլ պէտք է սկսէ այդպիսի փոփոխութիւններից մինը զանազանել և որոշել միւսից՝ իրանց գործադրութիւնների մէջ, և զրել մինը միւսի նման՝ նըման դէպերում: Գրութեան ուսումը չպէտք է ուսուցանէ հոլովելն ու խոնարհելը:

Բայց աշակերտն աւելի առաջ պէտք է գնայ և ծանօթանայ նախադասութեան պարզ և յօդուածոյ ծեւերի հետ (4) որովհետև միշտ գրութեան ուսումը՝ բանաւոր լեզուի համեմատ՝ պէտք է առաջադիմութիւն անէ:

Իւրաքանչիւր առանձին նախադասութիւն և այս վերջինների կապակցութիւն՝ աշակերտը պէտք է ըմբռնէ իրբեկ մի անխզելի միութիւն: Երբ որ սովորում է հարկաւոր տեղը շեշտել և հարկաւոր տեղը աւելի կամ պակաս տեղութեամբ դադար առնել, անշուշտ կազնուանայ նորա լեզուն, և նա կըմբռնէ ներքին սերտ միութիւնը: Այսպիսի արտասանութեան միջնորդութեամբ զգալի պէտք է կացուցանել գրութեան այն արուեստական հնարների կարսորութիւնը, որ մինք կէտաղրութիւն (5) ենք կոչում: Այս վախճանով զրութեան վարժութիւնների ժամանակ հարկաւոր է զանազան կարգի և տեսակի նախադասութիւններ գործածել, իրբեկ օրինակներ, որոնց նմանութէամբ այնուհե-

տե միւսները պէտք է չափվին և կշռվին: Զոր օր, պէտք է որոշել ոչ միայն—այլ եւ նախադասութիւնը, թէպէտ—սակայն նախադասութիւնը, եթէ—հապանագրասութիւնն և այլն:

Առողջանութեան մի հանգամանքն ևս այն է, որ նախընթաց բառի (կամ՝ վանկի) վերջին բաղադայնը արտասանութիւն (6) ժամանակ միացնում ենք հետեւեալ բառի նախադաս ձայնաւորի հետ (որ նոր, եղբայր նաևաց, մէկից ցաւելի): Խսկ գլութիւնն ժամանակ՝ բառի ամբողջութիւնը անարատ պահպանում ենք (որն որ, եղբայրն ասաց, մէկից աւելի): Եւ ընդհակառակ արտասանութեամբ անբաժաննը՝ գրութեամբ բաժանում ենք բառակազմութեան համեմատ: մենք արտասանում ենք՝ զնումնեմ, զնումնես, զնումնէ, կասէ, կօրհնէ, բայց գրում ենք բաժանած՝ զնումն եմ, զնումն ես, զնումն է, կ'ասէ, կօրհնէ: Սովորութիւն է նմանապէս շատ անգամ զեղջել ը կիսահայնի գրութիւնը: մենք չենք գրում զըրիչ, տլրտմել, շննիկ:

Մի անգամ էլ կըկնում ենք, թէ ինչ որ աշակերտը գրում է, այն ևս նա պէտք է տեսնէ շարժական տպագրած տառերով, որպէս զի յետոյ տպագրած գրքի ընթերցանութիւնը նորան ոչինչ գժուարութիւն չպատճառէ: այս պէտք է համարվի հասարակ կանոն:

Ի՞նչ պէտք է գրվի գրագիտութեան այս աստիճանում:

Արգէն լաւ յայտնի է, որ գրութիւնը պէտք է ամուր հիմնվի լսածի և խօսածի վերա: Ինչ որ աշակերտը ուսանում, հասկանում, բանաւոր արտայացում է, այն պէտք է գրէ: Միշտ պէտք է գրվի յայտնի և ծանօթ եղածը: Այս սկզբունքը ամենայն ձշութեամբ պիտի գործադրվի, բայց սխալ ընթացք չստանայ: Նախ և առաջ հարկաւոր է բնաւ չշփոթել առարկաների դասը լեզուի դասի հետ: Առարկայի ծանօթականների դասը լեզուի դասի հետ: Առարկայի ծանօթութեան համար շատ բառեր մի ներքին միութիւն են կազմում, որոնց մասին որ գուցէ աշակերտներն ևս շատ կամ քիչ պաշար ունենան խօսելու, զոր օր: մի շատ կամ քիչ պաշար ունենան խօսելու, զոր օր: մի պահպանի կապակցութիւն կայ հետեւել բառերի մէջ—այդպիսի կապակցութիւն կայ հետեւել բառերի մէջ— ծառ, արմատ, բռն, ճիւղեր, ոստեր, տերե, ծաղիկ, ծառ, արմատ, բռն, ճիւղեր, ոստեր, տերե, ծաղիկ, այս միութիւնը պտուղ, աղարթի: Իրեն առարկայ՝ այս միութիւնը շուշատ ընտիր է, իրրի լեզու՝ ոչ մի կարևորութիւն չու-

Նի՞ Անգուի միութիւն են կազմում զոր օր. հետևեալ բառերը—բոյս, բուս-ական, բուս-եղէն, բուս-պեր, ան-բոյս, ընդա-բոյս, կենդանա-բոյս, զուցէ և բոյծ. կամ մի ուրիշ տեսակէտի պատճառով—բոյս, յոյս, ըոյս, կոյս (ոյ երկրաբրառ). կամ դարձեալ մի ուրիշ դիտմամբ—բոյս, տռնկ, խոտ, բանջար, ծառ, անտառ (նոյնանիշ և նոյն սեռը արտայայտող բառեր), ծառ և պառեղ, ծնող և զաւակ (փոխաբերութիւններ):

Մնաց այժմ ցոյց տալու, թէ այս կերպի գրութեան ուսումը ինչպէս հիմք է գառնում. դիտակցական ընթերցանութեան համար, այն ընթերցանութեան՝ որ աւելի վերծանութիւն պիտի կոչվի:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ. Մեզանում ընթերցանութիւնը միայն անուսամբ կայ. մեր աշակերտները լաւ չեն կարգում: Մի գարման պէտք է գտնել, որ այս տիտուր երևոյթը վերանայ: Հէնց սկզբից հիմքը լաւ պէտք է հաստատվի:

Ընթերցանութեան արուեստը երկու իրարից տարբեր գործողութիւն է պահանջում. նախ պէտք է աշքով քաղած գիրը դարձնել հնչման, տեսածը շրթունքով թարգմանել—այս արտաքին գործ է. և երկրորդ հասկանալ և իմանալ գրի գորութիւնը, բովանդակութիւնը—այս էլ ներքին գործ է: Ուրեմն կարդացողը այնքան վարժ պէտք է լինի, որ արդէն աշխով ըմբռնէ ձայնը, աշքով լսէ բառի վանկերը, յատուկ հնչիւնները և շեշտը. վերջապէս նա պէտք է աշքի ագրմամբ լսէ բառերի համաձայնութեան և ամրող նախադասութեան սեպհական ձայնական ելեկչները: Եւ այս հմտութիւնը հարկաւոր է ոչ թէ այս խորհրդով, որ նա լոկ միայն շրթունքներ շարժէ և բարբաջելով կարդայ, այլ որ հասկանայ գիրը, իմանայ թէ ուրիշները մեղ ինչ են հաղորդում տպագրութեան կամ ձեռագրի միջնորդութեամբ:

Թէ ընթերցանութիւնը նախ և առաջ կապված է ձայնական խօսողութեան հետ, այս մենք փորձով գիտենք: Մինչև անգամ երբ որ լուս ենք կարգում, այսինքն՝ առանց ձայն հանելու և առանց շրթունքները շարժելու, այնուամենաւ մեր մտածողութեան մէջ բառեր և նախադասութիւններ մտրմացնում ենք իրանց սեպհական շեշտերով և ելեկչներով, իսկ մանուկը՝ եր-

բեմն ևս հասակաւորը՝ երբ որ սկսում է մտածել, հետը կամացուկ շարժում է շրթունքները և կիսաձայն խօսում է: Միով բանիւ աշակերտը միայն այն է հասկանում, ինչ որ բարձրաձայն կամ գէթ շրթանց կամացուկ շըուկով կարդում է. նա միայն հետզհետէ վարժվում է այն կէտին համնելու, որ իւր աչքով տեսած սոսկ գիր ու նշանը իւր մտքի մէջ լուսացած որոշում է որպէս իմաստալից բառ: Հիմի հասկանալի է, թէ այն ուսումը, որ բանաւոր վարժութիւններով տալիս է զրելու առաջնորդութիւն և կսքվում է ընթերցանութեամբ, աւելի արագ արագ և հաստատուն կերպով կը հասնի ցանկալի հետևանաց, ուր ընթերցանութիւնը ոչ թէ սոսկ ձայնական կարդալ և բարբաջումն է զանումը, այլ գիտակցական վերծանութիւն:

Իսկ որպէս զի գրի գօրութիւնը իմացվի՝ նախ և առաջ հարկաւոր է, որ բառի ներքին հիւսութեածքը և կազմութիւնը յայտնի լինի. և մենք արդէն գիտենք, որ կերը նկարագրած բանաւոր և գրաւոր վարժութեանց կէտ նպատակը հէնց այդ էր: Ահա ուրեմն ընթերցանութեան բուն խարիսխը:—Կարդալու ժամանակ մանուկը պէտք է արդէն բազմիցս արտասանած բառը վերաստուգէ և ճանաչէ զրաւոր նշանների մէջ, թէ արտաքին ձեռվ և թէ նորա ներքին իմաստով: Որպէս զի իւր կարդացածից ոչ միայն աննշանակ ձայներ քաղէ, այլ այդ ձայներից նշանական բառեր ըմբռնէ, նա պէտք է ձայների մէջ մի կապկացած իմաստ գանէ, պէտք է մարմնին հոգի տայ: Բառին այդպիսի դրոշմէ տալիս լաւ շեշտը, լաւ արտասանութիւնը. միայն այդ գէպֆում գատարկ հնչիւնը հոգի է առնում և հանդիսանում է որպէս իմաստ և բովանդակութիւն ունեցող կենակնի բառ: Մանուկը երբէք չի կարողանայ «հայր» բառը հէնց այդպէս ըմբռնել, եթէ ընկերներից լսում է աղաւաղիալ ձայնով, կամ իթէ ինքն էլ կարդում է ձգձգելով և արտասանում է «հայրիր»: Ապա ուրեմն վաղորօք հաստատված պէտք է լինի ձիշտ արտասանութեան վարժութիւնը, որպէս զի այդ տեսակ անտեղութիւնները արմատով վերացած լինին: Եթէ պէտք է կարդացվի «սպասապուռ» բառը, նա կիերական ակնարկ ձգելով անմիջապէս կը հասկանայ, թէ այդ բառը կրկնաւոր բառ է, ուրեմն բաւական է,

որ առաջին կէսը կարդայ (սպառ), իսկ միւս կէսը առանց դժուարանալու ծանօթ եղածի պէս կը լրացնէ. կամ թէ «արհամարհանք» բառը այսպէս կը լուծէ ըստ բառակազմութեան արհամարհանք և բաւական կը համարէ ուշագրութեամբ համարդել միայն առաջին մասը, գիտենալով, որ երկրորդ մասը յայտնի յօդակապ է, երբորդ մասը կրկնաւոր ձայն է, և փերջին մասը ծանօթ մասնիկ է. այսպէս ևս «անտօն-կի» բառի մէջ իսկոյն կորոշէ իրան յայտնի նախադաս և վերջադաս մասնիկները և առաւելապէս կը ճգնէ կապել միայն տօն վանկը:

Քանի որ տպագրութիւնը չէր հնարած, ընթերցանութիւնը կախում պիտի ունենար գրութիւնից, այսենքն զրելով պէտք է սովորեցնէին ընթերցանութիւնը, և ոչ թէ ընդհակառակ. այս գիւտից յետոյ սովորութիւն դարձաւ մանկան ձեռքին տալ մի տպագրած գիրք: Մարդիկ սկսեցին, անմիջապէս նեղել տալով, ուսում աւանդել, այսինքն անմիջապէս գիր կապել տալով, կարդացնելով: Այս ուղղութեամբ մանուկը հէնց դպրոցական առաջին օրը մանում էր մի անծանօթ աշխարհ, որ սև գծերով և նշաններով մի անառիկ բերդ էր դառնում նորա համար: Մեր նորագոյն վիպասանները արդէն լաւ նկարագրել են, թէ մանուկը որպիսի աղէխորով և սրտաճմլիկ ձայներով էր ըսկում իւր ուսման գործը, և որքան տարի էր տեսում, մինչև որ հն ի հն իրը թէ վախճանին էր հասնում: Նոյն իսկ այսօր ևս մանուկները շատ անզամ գիր կապելուց վեր չեն գնում, գրքից ոչինչ իմաստ չեն քաղում, ուսումնարանից միայն տաղտկութիւն և վիատութիւն են դուրս բերում: Այսպէս հաստատվել է այն վատ սովորութիւնը, որ ընթերցանութիւնը բաժանել են երկու աստիճանի՝ նախ սովորեցնում են մեքնական ընթերցանութիւն կամ արտաքին գործ, ապա իմաստասիրական ընթերցանութիւն կամ ներքին լուսաւորութիւն. և ով գիտէ, արդեօք այս վերջինը կատարվիւմ է երբ և իցէ, թէ մանուկը տարեցտարի այր—թէ—ձէ—ռայի հետքերով է քաշքուում իւր գրոցական կեանքը:—Այս ամէնը պէտք է փոխվի, մանուկը պէտք է սովորէ և վարժի գրի մէջ մանաչել ձայնական լեզուն. նա ուրեմն պէտք է նախ իւր խօսածը յօդերի

բաժանէ և գրէ, ապա թէ գրածը կարդայ: Այս ուղղութեամբ ընթերցանութիւնը կը մինի գը աւոր վարժութեան պատուի և արդիւնք: Ուրեմն սա մի չնչին խնդիր չէ, որ շատ անգամ հարցնում են՝ արդեօք մենք պէտք է սովորեցնենք գը եւ կարդալ: թէ կ արդ գը լ-գրել:

Այս բոլոր ասածներից այն է հետեւում, որ ընթերցանութիւնն այսպէս պէտք է ուսուցանվի, որ աշակերտը գրի մէջ մանաչէ մարդկային խօսուն լեզուն: Եւ եթէ նա վարժվել է իւր արտասանած և հասկացած բառերը իւր ձեռքով գրել, նա ուրեմն ինքը ստեղծում է աչքին երկելի լեզու, ուր իւրաքանչիւր սև գծից խորհուրդ և իմաստէ քաղում: Այժմ այդ տեսանելի լեզուն և գծերը օտար բան չեն նորա համար, նոցացա մէջ ոչ մի անձանօթ բան չի գտնում, նոցաամէն մէկ ձևի, ամէն մէկ գծի, ամէն մէկ կէտի նշանակութիւնն ու զօրութիւնը լաւ գիտէ, որովհետև նա միշտ միայն այն է ձեացրել, ինչ որ իւր ականջով և շրմունքով որոշել է, իսկ այժմ վերստին նոյն ձեերն է տեսնում: Հետեւապէտ, եթէ այժմ նա ուզենայ գրածը (ուրեմն և տպագրածը) կարդալ, նա կրկնի կը ճանաչէ գրերի մէջ նախկին ելեկջը, շեշտագրութիւնը, ձայնների յօդակազմ կապակցութիւնը, այսինքն նշանի իմաստը: Ինչ որ կարդայ, նա կը կարդայ նոյն առողջանութեամբ, ինչպէս որ խօսելու ժամանակ իւր ականջը լսել էր և բերանը արտասանել: Ուրեմն սովորական ձանձրալի, անխիտատ, անհոգի, մեռելաձայն տգեղ գիր կապելը տեղի չի ունենայ. հիմնապէտ գորա առաջն է առնված: Եթէ իւր ձեռքով պատկերացուցած նշանների զօրութիւնը հասկանում է, եթէ միշտ միայն պարժիկ պատկերացնել, ինչ որ կանխաւ որոշակի չ յօդարացնել է և բատ ամենայնի բան նշանաշել է, յօդարացնել է և բատ ամենայնի բան նշանաշել է գրել, այդ կը մինի և այն յաջող քայլը, որ կելով է գրել, այդ կը մինի և այն յաջող քայլը, որ սկսէ հասկանալ և ուր ի շի պատկերացուցածը, այսինքն ուղղակի կարդալ այն, ինչ որ ինքը չէ գրել:

Սակայն գրքով կարդալը յատուկ գժուարութիւններ ունի: Նախ և առաջ ձեռագիրն ու տպագրած գիրը բառաւական անսմանութիւններ ունին: Ուստի և աշաբառական կերտը նոր չպէտք է սովորէ այս տարբերութիւնների կերտը նոր չպէտք է սովորէ այս տարբերութիւնների ձանաչումը, այլ իսկզբան անտի ինչ որ իւր ձեռքով գը-

լել է, այն ամէնը միշտ պէտք է տեսած լինի տպագրած նշաններով ևս (շարժական տառերով): Երկրորդ՝ զբելու ժամանակ ինքն է ձևացնում ամբողջ բառը հետզհետէ վանկերով, իսկ տպագրածի մէջ բառն արդէն ամբողջացած է գտնում և տեսնում, որը ոչ իւր մտքում նախ պէտք է խնամքով վերլուծէ, ապա թէ կարողանայ ճշտիւ արտաքերել ձայնով կամ կարդալ: Լաւ կարդալու համար պէտք է լաւ սովորութիւններ և հաստատված լինին: Յայտնի է, թէ աշակերտներն ինչպէս են դժուարանում և ը կ ա յ ն բ ա ռ ե ր ը ճշդիւ կարդալ, նոքա կամ մէջ տեղից վանկ են կուլ տալիս, կամ հնչիւնները տեղափոխում են և ուրիշ տեսակ աղաւաղութիւններ և աղճատումներ են հնարում: Փոխանակ կարդալու «անգործութիւն», նոքա ասում են ա ն գ ը ո ծ ու թ ի ւ ն, ա ն գ ի ը ծ ո թ ի ւ ն, ա ն գ ո ր ո ւ թ ի ւ ն և այլն: Որպէս զի աշակերտը չդժուարանայ այդպիսի բառեր կարդալը, նա պէտք է այդ բ ա ը դ գործը մաս ե ր ի բաժանէ, նա պէտք է գ տ ն է ն ա խ ձ ա յ ն ա ւ ո ր ն ե ր ը — ա, ո, ու, իւ, և այնուհետև լուս ձ ա յ ն ո վ հատուած հատուած կապէ վանկերը, \*) և ապա թէ բ ա ը ծ ը ա ծ ա յ ն արտասանէ գտած բառը ամբողջովին և շեշտով: Նոյնպէս եթէ նա կարդում է ամբողջ նախադասութիւնը, նա պէտք է ըմբռնէ հարցական նշանի, բութի, ստորակետի, վերջակէտի և ուրիշ նշանների խորհուրդը և իւր ընթերցման առողանութեամբ ապացուցանէ, թէ տրոհութեան նշանները միաւ չի ըմբռնել. նա պէտք է իրան հաշիւ տայ, թէ ինչպէս կարդայ այ, ոյ, իւ, ո, ե (այս, տեսայ, —սոյ, ներքոյ, նոյն, —թիւ, թիւր, —ողջ, առողջ, —եկեղեցի), կամ ինչպէս կարդայ այն ծորդ բարձայները, որոնց գ ը ո ւ թ ի ւ ն ը որ երբեմն տարբերվում է ա ը տ ա ս ա ն ո ւ թ ի ւ ն ի ց (ինչպէս որ զրութեան ժամանակ նա նկատում էր, թէ երբեմն արտասանած չ, թ... զրում է չ, զ..., այնպէս էլ այժմ առանձին պէտք է նկատէ, թէ տպագրած ջ, գ... արտառանլում է չ, թ...): Նա պէտք է բաժան-

ված տպածը երբեմն կարդայ անբաժան և բնուշակառակ (գնում է—«գնումէ», կը գրէ—«կըգրէ» այսպէս ևս՝ որն որ—«որ նոր»)։ Նա պէտք է մի Ոչ մի այնից յետոյ գուշակէ մի Այլ և, թէ պէտից յետոյ՝ Մական, Եթէ-ից՝ Հապա և այլն։ Մի խօսքով ամենայն տարակուսելի հանգամանք պէտք է աշխատէ անձամբ լուծել, լուռ ձայնիւ պատրաստելու ժամանակ, և բարձրաձայն ասէ միայն պատրաստ արդիւնքը. իսկ երբ որ դժուարանայ՝ հարցնէ ուսուցչից լուծումը:

Ընթերցանութեան ժամանակ ամէնից աւելի  
դժուարութիւն է պատճառում ը կիսաձայնը, որը որ  
շատ անգամ տպագրած չի նշանակվում: Մանուկը չպէտք  
է կարծէ, թէ զոր օր. «արտմել» բառը միավանկ է, ո-  
րովհետև բառի մէջ տեսնում է միայն մի ձայնաւոր:   
Այս և սորա նման դժուարութիւնների դէմ առնելու  
համար, այրբենարանը ժամանակաւոր նշաններ պէտք  
է զործածէ:

Մասում է որ գըագիտութեան վերաբերեալ  
բոլոր հմտութիւնները ի մի անփոփենք, որ  
մենք յաւելուածում արդէն ներկայացրել ենք առան-  
ձին ցուցակով:

\*) Սկզբում ամենայն մանրամասնութիւններով. ա, ան| ո,  
զո, զոր—անզոր. ու, ծու—անգործու| իւ, թիւ, թիւն—անգործու-  
թիւն. իսկ յետոյ աւելի համառօտակի. ան, զոր—անզոր. ծու—  
անգործու. թիւն—անգործութիւն:

# Յ Ա Կ Կ

(Ուսուցչական մասի).

	Երես
<b>Յառաջաբան</b>	<b>5</b>
<b>Նախաօտարիդ</b>	
1. Առաւօտ	11
2. Գաթան ու փախլաւը	14
3. Նապաստակ	16
4. Այսօր անձար	18
5. Տոռեղ ճուտեր	22
<b>Խօսել-գրել-կարդալու հրահանգ</b>	
6. Մեզր ուսողի հէքիաթը	33
7. Արե	36
8. Կատու	39
9. Սերմանացան	42
10. Խելք ու միտքը խաղերին տուած հարսիկը	45
11. Ծաղկաքաղ	47
12. Ճնձղուկ	50
13. Առիւծի գատաստանը	53
14. Քաղցած մարդու հանաքները	58
15. Հարսանիքի երգեր	60
16. Ջրաղաց	63
17. Կաչաղակ	65
18. Աւագ մկնիկ	68
19. Այրուբենը	71
20. Ազատ ընթերցանութեան փորձ (Հա- գան գան, Ախշատանքի ախպէրը, Մաստանը, Ծիտը, Բառախաղը, Պը- տիկն ու լիտիկը)	75
<b>Յաւելուածներ</b>	
Գրագիտութեան հմտութիւնները	81
Գրագիտութեան գասաւանդութիւնը	86

ՀԱՅ ՈՒՍՈՒԹԻՉ ՆԵՐԻ ՈՒԾԵԴՐՈՒԹԵԱՆ

Հըատարակելով դասագրքերիս նոր շար-  
քը, այն է՝ «Նոր Այբբենարանը», «Իրազըն-  
նական դասերը», «Հրեստոմատիա»-ներիս ա-  
և բ. հատորները (գ. և դ. հատորները տա-  
կաւին անտիպ են մնում), ես կատարեցի  
իմ նուիրական պարտքը—նոր նոզի և շունչ  
փշել մեր գպրոցների մէջ, վերանորոգել և  
թարմացնել (այն տեղ անփութութեան  
մատնված) դասատուութեան եղանակը: Արդ  
գործող դասատուների, աւագ ուսուցիչնե-  
րի, տեսուչների, մանկավարժական ժողով-  
ների վրա ևս պարտք է ծանրանում, որ  
նոքա էլ իրանց կողմից խուլ չմնան և լրր-  
ջութեամբ փորձեն ու ստուգեն իմ դաւա-  
նած մանկավարժական ճշմարտութիւննե-  
րը: Նորերիս իմ ուսուերէն դասագրքի գոր-  
ծադրութեան արդիւնքը անժիստելի կերպով  
յայտնագործեց (նոյն իսկ թովմա անհա-  
ւատների առաջ), թէ իզուր ջանքեր չեմ  
թափել իմ դասագրքերի կազմութեան վերա,  
որոնք ամենայն անարդարութեամբ (թերես  
անհասկանալի անմտութեամբ և անզըր-  
ջրհեղեղեան նախապաշարումներով) մեր

22263

մանկավարժ կոչվածների ուշադրութեան  
չեն արժանանում: Բաց արա աչքդ, հայ  
ուսուցիչ, ճանաչիր սուրբ առաքելութիւնդ  
և կենդանացըռու մատաղ սերնդեան դպրո-  
ցական տաղտուկ և մեռելական տարիները:

Ս. Մ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0255251

11. 061

2-4578а

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱԶՄԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

«Ենակեալ աշխարհ»,  
«Դիւցադնակոն աշխարհ»,  
«Նահապետական տշխարհ»,  
ՀՀԱՀԵԼԻ թուարանական խնդիրներ,  
Կեանքի հանդամանքների համեմատ  
թուարանութիւն,

Խրեստոմատիաներ,  
Իրազննական գասեր,  
Նոր Այբբենարան:

---

ԳԻՒՆ Ե 75 ԿՈՊ.